<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

# 2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



Սույն զարգացման ծրագիրը մշակվել է ՀՀ ԿԳՄՍ Նախարարի 2024թ. փետրվարի 8-ի հ.09-Ն հրամանի համաձայն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1.Դպրոցի առաքելությունը ........................................................ 3
2. Դպրոցի գործունեությունը ........................................................ 3.
3.Իրավիճակի վերլուծությունը.
3.1 Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների վելուծությունը........................................................ 7
3.2 Դպրոցի մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծությունը........................................................ 14
3.3 Համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը........................................................ 18
3.4 Դպրոցի խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը.................. 22
3.5 Դպրոցի շենքային պայմանների նպատակային գերծածության վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը........................................................ 25
4. Նպատակները և խնդիրների սահմանումը ........................................................ 37
5. Ակնկալվող արդյունքները........................................................ 62
6. Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշներն ու պահանջները........................................................ 63

## ՆԱԽԱԲԱՆ

Հայրենիքի պաշտպանության և պետականության ձևավորման հիմնաքարը կրթությունն է, որը սկսվում է դեռ վաղ տարիքից և չունի ավարտի սահման: Կրթությունը մի գործընթաց է, որի շնորհիվ իրականացվում է անհատի,հասարակության և պետության շահերից ելնող ուսուցումն ու դաստիարակությունը, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:

«ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029 թթ զարգացման ծրագիրը հանդիսանում է « ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի զարգացման ռազմավարական նշանակության փաստաթուղթը:

Զարգացման ծրագրի նպատակն է պլանավորել ուսումնական հաստատության հետագա զարգացման ընթացքը՝ լուծելով դպրոցի առջև դրված խնդիրները արդյունավետ և օպտիմալ եղանակներով, հասնելով ցանկալի արդյունքի՝ հիմնվելով<<ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության իրավիճակի օբյեկտիվ վերլուծության վրա:

### 1. Դպրոցի առաքելությունը

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

### 2.Դպրոցի գործունեությունը

Պետրովկայի հիմնական դպրոցը հանրակրթական տարրական և հիմնական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրական կազմակերպություն է:
Դպրոցը նախկինում հանդիսացել է Միխայելովկայի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ , իսկ 2003թ-ին ձևավորվել է որպես առանձին հիմնական դպրոց Պետրովկա գյուղի տարածքում:
« ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ը ՀՀ իրավաբանական անձանց պետ ռեգիստրում գրանցվել է 2003 թվականի հունվարի 31-ին 69․210․00216 համարով:
2011 թվականի դեկտեմբերի 5-ին տրվել է լիցենզիաներ՝
տարրական Ա 0721 /30 սահմանային տեղ/,
հիմնական Ա 0710 /40 սահմանային տեղ/:
Դպրոցի պաշտոնական կայքն է՝ http://petrovka.schoolsite.am,
էլեկտրոնային հասցեն petrovka@schools.am :
Դպրոցն այժմ գործում է 2003թ կառուցված տիպային շենքում՝ Պետրովկա գյուղի 2փ.,1նրբ.,2տ. հասցեում:

Դպրոցն իր գործունեությունը ծավալում է ղեկավարվելով.
«Կրթության մասին», «Հանրակրթության մասին»,«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»,«Աշխատանքային օրենսգրքով»,դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի՝ հաստատության հաստատած տարբերակներով,ներքին իրավական ակտերով, Հանրակրթական պետական չափորոշիչով, «Կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Լեզվի մասին» ,ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարի 2020թ․սեպտեմբերի 8-ի հ․28-ն հրամանով հաստատված է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը՝

**Հավելված N 1**
**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի**
**և սպորտի նախարարի 2020 թվականի**
**սեպտեմբերի 8-ի N 28-Ն հրամանի**

ՑԱՆԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Էլեկտրոնային դասամատյաններ
2. Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ
3. Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
5. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
6. Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ
7. Էլեկտրոնային հաստիքացուցակ
8. Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնադրի որոշմամբ
9. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն.
10. Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
11. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
12. Դասալսումների արդյունքների արձանագրություն
13. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
14. Սովորողների շարժի մատյան

Ամենօրյա գործունեությունը կանոնակարգելու նպատակով դպրոցն իր իրավասության սահմաններում կարող է նաև մշակել, օգտագործել այլ փաստաթղթեր:

«ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2024-2029 թթ. ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ սեպտեմբերի 22-ի N35-Ն հրամանում հավելվածի փոփոխություն կատարելու մասին 2024թ փետրվարի 8-ի N09-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Ղեկավարվելով վերը նշված հրամանի դրույթներով՝ դպրոցի զարգացման ծրագրի մշակման նախապատրաստական փուլում հիմք են ընդունվել մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների կողմից ներկայացված առաջարկները․

**Մանկավարժական խորհրդի կողմից՝**

1. Լաբորատորիայի և սմարթ կաբինետի ստեղծում, դիդակտիկ պարագաների ձեռքբերում
2. Մանակավարժական համակազմի վերապատրաստում

**Ծնողական խորհրդի կողմից՝**

1. Դպրոցի կոսմետիկ վերանորոգում,բակի բարեկարգում
2. Աշակերտական գույքի նորացում

**Աշակերտական խորհրդի կողմից**

1.Դպրոցի տարածքում կառուցել բացօթյա մարզահրապարակ, սպորտդահլիճը համալրել անհրաժեշտ մարզագույքով:

Դպրոցում գործում են հետևյալ մարմինները.

**Կառավարման՝**

1.կառավարման միացյալ խորհուրդ - բաղկացած 14 անդամներից

**Խորհրդակցական ՝**

1.Մանկավարժական խորհուրդ՝բաղկացած 10 անդամից
2.Ծնողական խորհուրդ՝ բաղկացած 9 անդամից
3.Աշակերտական խորհուրդ՝ բաղկացած 7 անդամից
4.Առարկայական մեթոդական միավորումներ՝
ա/հումանիտար և հասարակագիտական առարկաների
բ/բնագիտամաթեմատիկական
գ/տարրական դասարանների




Դպրոցի կառավարումն իրականացնում են տնօրենը,վարչատնտեսական համակարգողը, միացյալ կառավարման խորհուրդը՝ Միխայելովկայի միջնակարգ դպրոցի հետ միասին - 14 անդամ:

**Ներկայացվում է <<ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց>> և <<ՀՀ Լոռու մարզի Միխայելովկայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ների միացյալ խորհրդի անվանական կազմը.**

| հ/հ | Անուն ,Ազգանուն | Առաջադրող |
|---|---|---|
| 1 | Ավետիսյան Կարեն | Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, Մշակույթի և սպորտի նախարար |
| 2 | Մկրտչյան Արման | |
| 3 | Բասենցյան Սեդա | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի կողմից առաջադրված |
| 4 | Սաղաքյան Մարտին | |
| 5 | Անժելա Մուկուչյան | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Սարչապետ համայնքի ղեկավարի ներկայացմամբ |
| 6 | Զարուհի Հովհաննիսյան | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի <<Պետրովկայի |

| | | |
|---|---|---|
| 7 | Մանուշակ Սուքիասյան | հիմնական դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված |
| 8 | Շիրազ Աղայան | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի <<Պետրովկայի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված, |
| 9 | Ալինա Ալեքսանյան | |
| 10 | Սուքիասյան Մելինե | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Մեծավան համայնքի ղեկավարի ներկայացմամբ |
| 11 | Մնացականյան Նունե | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի <<Միխայելովկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված |
| 12 | Ամիրջանյան Ինգա | |
| 13 | Բարոյան Նարինե | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի <<Միխայելովկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված, |
| 14 | Չիլինգարյան Մարինե | |

Տնօրենը զբաղվում է դպրոցում իրականացվող գործընթացների ընթացիկ կառավարման, կազմակերպչական ,ուսումնադաստիարակչական հարցերով:Վարչատնտեսական համակարգողը՝ ֆինանսական,ուսումնաօժանդակ անձնակազմի ,դպրոցի պահպանման հարցերով:

**Մարդկային ռեսուրսները**

| Վարչական ուսումնաօժանդակ անձնակազմ | Հաստիքների ընդհանուր քանակ | Հաստիքը զբաղեցնող աշխատակիցն երի քանակ | Հաստիքը զբաղեցնող աշխատակիցների ընդհանուր դրույք |
|---|---|---|---|
| Վարչատնտեսական անձնակազմ | | | |
| տնօրեն | 1 | 1 | 1.0 |
| հաշվապահ | 1 | 1 | 1 |
| վարչատնտեսական համակարգող | 0,5 | 1 | 0,5 |
| Մանկավարժական աշխատողներ | | | |
| Հոգեբան | 0,5 | 0 | 0,5 |
| Ջինդեկ | 0,5 | հեռավար | 0,5 |
| Գրադարանավար | 0.75 | Երեխայի խնամքի արձակուրդ | 0.75 |
| Ուսուցչի օգնական | 0.5 | 0 | 0.5 |
| Ուսուցիչներ | 9.7 | 8 | 9.7 |
| Ուսումնաօժանդակ անձնակազմ | | | |
| Հավաքարար | 1 | 1 | 1 |
| Համակարգչային | 1 | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| օպերատոր | | | |
| Քաղ.պաշտպանություն | 0.3 | 0 | 0.3 |
| պահակ | 2 | 2 | 2 |
| Խոհարարի օգնական | 0.5 | 1 | 0.5 |
| Տնտեսվար | 1 | 1 | 1 |

# 3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## 3.1 Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների վելուծությունը

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ըստ կրթական աստիճանների,ուսումնական բնագավառները,դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները,հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը,ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները,սովորողների գնահատման ձևերը ,սանդղակը,հաշվառման կարգը:
**Կրթության որակ**՝կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք,որը գնահատվում է՝հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները,կրթության կազմակերպման միջավայրը,ուսուցման ծրագրային բովանդակությունը,կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝համաձայն սահմանված չափանիշների:
**Որակյալ կրթություն** նշանակում է,որ տվյալ դպրոցը կրթության միջոցով կարողանում է հիմնականում հասնել իր սահմանած նպատակներին,իսկ մանկավարժական աշխատողները կարողանում են սովորողին հասցնել սահմանված արդյունքին:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014թ. Դեկտեմբերի 1-ին ընդունվեց<<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>ՀՀօրենքը,որով նախատեսվում՝ հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Ներառական կրթության համակարգի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանվեց որպես **յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունք և կրթության որակի ապահովման երաշխիք**:

Ներառական դպրոցի տեսլականն այն դպրոցն է,որում բոլոր աշակերտները աջակցում են միմյանց և աջակցություն ստանում մանկավարժներից, որում յուրաքանչյուր աշակերտ իրեն ընդունված արժևորված և ապահով է զգում, և բոլոր որոշումների հիմքում ընկած են նրա ուժեղ կողմերն ու կրթական կարիքների ճանաչումն ու ապահովումը:

Դասամատյաններին,երեխաների և աշխատակազմի անձնական գործերին, կառավարման հին թղթային ձևերին փոխարինեց էլեկտրոնային գործավարությունը:
2020 թվականին կորոնավիրուսի պատճառով դպրոցն անցավ հեռավար ուսուցման, որն էլ պատճառ հանդիսացավ ժամանակակից նոր ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների կիրառման պահանջին: Այժմ առցանց եղանակով անցկացվում են հեռավար դասեր MS Teams միասնական կրթական հարթակի միջոցով:

Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից`
1) ուսումնական բնագավառներ, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջներ.
2) շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներ` ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ).
3) հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ.
4) սովորողների գնահատման ձևեր, սանդղակ, հաշվառման կարգ:
Նոր ՀՊՉ –ով կիրառվում են սովորողների գնահատման ձևերը․

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Սովորողը պետք է ունենա չափորոշչով սահմանված հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝

1. գիտելիք
2. հմտություն
3. դիրքորոշում
4. արժեքային բաղադրիչ

«ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը,բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները:
Դպրոցը միահերթ է, աշխատանքային շաբաթը՝հնգօրյա:
Սահմանային տեղերը ըստ լիցենզիայի ՝ տարրական -30 աշակերտ,հիմնական-40աշակերտ:
Դասարանների թիվը 2023-2024 ուս․տարում 7 է, կա 2 համակազմ դասարան:Ներկա պահին դպրոցում սովորում են 29 երեխա:

**Ներկայացվում է երեք տարվա կտրվածքով դասարանների և սովորողների թվի շարժը․**

| Դասարաններ | Դասարանների թիվը 2021-2022 | Սովորողների թիվը 2021-2022 | Դասարանների թիվը 2022-2023 | Սովորողների թիվը 2022-2023 | Դասարանների թիվը 2023-2024 | Սովորողների թիվը 2023-2024 |
|---|---|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 0,5 | 6 | 0.5 | 1 | 1 | 6 |
| 2-րդ դասարան | 0,5 | 3 | 0.5 | 6 | 1 | 1 |
| 3-րդ դասարան | 0,5 | 3 | 0.5 | 1 | 0.5 | 7 |
| 4-րդ դասարան | 0,5 | 1 | 0.5 | 2 | 0.5 | 1 |
| 5-րդ դասարան | 0,5 | 1 | 0.5 | 1 | 1 | 3 |
| 6-րդ դասարան | 1 | 6 | 0.5 | 1 | 0.5 | 1 |
| 7-րդ դասարան | 0,5 | 2 | 1 | 6 | 1 | 1 |
| 8-րդ դասարան | 0 | 0 | 1 | 2 | 0.5 | 6 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9-րդ դասարան | 1 | 2 | - | 0 | 1 | 3 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 5 | 24 | 5 | 20 | 7 | 29 |

Ինչպես երևում է աղյուսակից 2021 թվականից մինչև 2023 թվականը հիմնականում

աշակերտների թիվը նվազել է, իսկ 2023-2024 ուս․տարում կտրուկ աճել է:

Դա պայմանավորված է արտագաղթի արդեն ցածր ցուցանիշներից:

**Սովորողների առաջադիմությունը երեք տարվա կտրվածքով․**

| դաս. | Առաջադիմությունը | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *2020*-2021թթ․ | | | | *2021*-2022թթ․ | | | | *2022*-2023թթ․ | | | |
| | թիվը | գերազանց | լավ | բավ | թիվը | գերազանց | լավ | բավ | թիվը | գերազանց | լավ | բավ |
| I | 3 | - | - | - | 6 | - | - | - | 1 | - | - | - |
| II | 3 | 1 | 2 | 0 | 1 | 0 | 1 | 0 | 6 | 0 | 6 | 0 |
| III | 1 | 0 | 1 | 0 | 2 | 0 | 2 | 0 | 1 | 0 | 1 | 0 |
| IV | 1 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 1 | 0 | 2 | 0 | 2 | 0 |
| V | 6 | 2 | 3 | 1 | 1 | 0 | 1 | 0 | 1 | 0 | 1 | 0 |
| VI | 2 | 0 | 2 | 0 | 6 | 1 | 4 | 1 | 1 | 0 | 0 | 1 |
| VII | 0 | - | - | | 2 | 0 | 2 | 0 | 6 | 1 | 2 | 3 |
| VIII | 2 | 0 | 2 | 0 | 0 | - | - | - | 2 | 0 | 2 | 0 |
| IX | 4 | 0 | 2 | 2 | 2 | 0 | 2 | 0 | 0 | - | - | - |
| | 22 | 3 | 12 | 4 | 21 | 1 | 13 | 1 | 20 | 1 | 14 | 4 |

Ինչպես երևում է աղյուսակից ,սովորողների առաջադիմությունը միշտ եղել է բարձր,անբավարար արդյունք չի գրանցվել

**Դպրոցի գրադարանային ֆոնդը**

| Գրքերի տեսակ | Չափման միավոր | Քանակ |
|---|---|---|
| Դասագրքեր | հատ | 803 |
| Գեղարվեստականն ուսումնա-մեթոդական | հատ | 850 |
| Տեղեկատվական | հատ | 65 |

| | | |
|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 1718 |

**Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան/2023-2024 ուս.տարի/**

| հ/հ | Գործողություն | Ժամանակացույց | պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | Քննարկել և հաստատել ուսումնական տարվա ուսպլանը մանկխորհրդի առաջարկությամբ; Կազմել և կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել ուս տարվա տարիֆիկացիոն ցուցակը, հաստիքացուցակը,Նախահաշիվը,ներքին կարգապահական կանոնները | օգոստոսի վերջ | Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող |
| 2 | Հաստատել առարկայական մ/միավորումների ղեկավար կազմը,հերթապահության կարգը, ուստարվա միջոցառումների պլանը,1-ին կիսամյակի դասացուցակը,առարկայական մասնախմբերի տարեկան աշխատանքային պլանները,դասղեկների աշխատանքային տարեկան ծրագիրը, գրադարանավարի տարեկան աշխատանքային պլանը Փոփոխությունների տարեկան աշխատանքային պլաններում<br>Հաստատել 2-րդ կիսամյակի դասացուցակը: | մինչև սեպտեմբերի 1-ը<br>մինչև հունվարի 1-ը | տնօրեն, մմ նախագահ,(քանի որ դպրոցը չունի տնօրենի ուսումնական գծով տեղակալ) |
| 3 | Թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների կատարման վերահսկողություն | ուս . տարվա ընթացքում | տնօրեն, մմ նախագահ |
| 4 | Ուսումնասիրել ուսումնական ծրագրերի կատարողականը, էլեկտրոնային դասամատյանների, օրագրերի վարման վիճակը: Արդյունքները քննարկել տնօրինության նիստերում: | ամիսը մեկ անգամ | մասնախմբերի ղեկավարներ, դասղեկներ |
| 5 | Կիսամյակների սկզբին և ավարտին հրավիրել դասարանական, ծնողական ժողովներ՝ ձևավորել դասարանական ծնողխորհուրդներ՝ 5-7 հոգուց բաղկացած: Ծնողների մասնակցությամբ կազմակերպել բանավեճեր, զեկուցումներ, ընթերցումներ, նվիրված աշակերտ-դպրոց-ընտանիք կապին: | ուս . տարվա ընթացքում | Դասղեկներ, ծնողներ |
| 6 | Ավարտական դասարանների գիտելիքները ստուգելու նպատակով տարեկան երկու անգամ /յուրաքանչյուր կիսամյակի համար 1 հատ/ անցկացնել ստուգողական գրավոր աշխատանքներ: | դեկտեմբեր, ապրիլ | տնօրեն, մասնախմբի նախագահներ |
| 7 | Դասղեկների կատարած աշխատանքների քննարկում | ուս . տարվա ընթացքում | ԴԱԿ |

| | | | |
|---|---|---|---|
| 8 | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ | ուս․ տարվա ընթացքում | ԴԱԿ |
| 9 | Ապահովել դպրոցի ծնողների համատեղ գործունեությունը | ուս․ տարվա ընթացքում | ԾԽ, դասղեկներ |
| 10 | Իրականացնել վերահսկողություն՝նախատեսված աշխատանքների կատարման,հաճախումների հաշվառման,էլեկտրոնային մատենավարության, ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության վրա: | ամեն ամիս | Տնօրեն, հաշվապահ, համակարգող |
| 11 | Հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, հետևել որպեսզի դասերն ընթանան ուսումնադիտական նյութերի, լաբորատոր սարքավորումների, տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ: | ուս. տարվա ընթացքում | Տնօրեն, մասնախմբի նախագահներ, վարչատնտեսական համակարգող |
| 12 | Կատարել գույքագրում | դեկտեմբեր | Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող |
| 13 | Ծնողներին մասնակից դարձնել համադպրոցական միջոցառումներին արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքների քննարկման գործընթացներին: | ուս. տարվա ընթացքում | Տնօրեն,դասղեկներ |
| 14 | Հրավիրել աշակերտական և ծնողական խուրհուրդների նիստեր՝ըստ գործող կարգի և կազմել նիստերի օրակարգերը և ժամանակացույցը | ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն, դասղեկներ |
| 15 | Յուրաքանչյուր շաբաթվա վերջում գումարել տնօրինության նիստ, վերլուծել շաբաթական պլանները, քննարկել հաջորդ շաբաթվա անելիքները: | ուս.տարվա ընթացքում | Տնօրեն |
| 16 | Աշակերտների օգնությամբ ձևավորել դասասենյակները և միջանցքները:<br>Ձևավորել ստենդներ, վահանակներ, պատի թերթեր:<br>Կազմակերպել միջոցառումներ նվիրված հիշարժան տարելիցներին, մեծ գրողներին ու արվեստագետներին: | ուս.տարվա ընթացքում | Դասղեկներ,դասվարներ |
| 17 | Դասղեկի գործունեության հիմքը դարձնել շաբաթական մեկ ժամի կատարումը, անհարգելի բացակայությունների նվազումը, առողջ կոլեկտիվի ձևավորումը, ազգային արժանապատվության և հպարտության ձևավորումը: | ուս.տարվա ընթացքում | դասղեկներ, դասվարներ |
| 18 | Անցկացնել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը: | դեկտեմբեր | կազմկոմիտե, մասնախմբի նախագահներ |
| 19 | Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ սեմինարներ: | ուս.տարվա ընթացքում | Տնօրինություն,օպերատոր |

| | | | |
|---|---|---|---|
| 20 | Դպրոցի տարածքում տեսանելի վայրերում և բոլոր միջանցքներում տեղադրել և փակցնել պաստառներ և հուշաթերթեր՝հակահամաճարակային անվտանգության կանոնների վերաբերյալ: | օգոստոս-սեպտեմբեր | դասղեկներ |
| 21 | Կատարել դասալսումներ հետևյալ համամասնությամբ. Տնօրեն՝ շաբաթական 4-5 ժամ մասնախմբի նախագահ՝ 2-3 ժամ: Դասալսման արդյունքները քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման մատյանում գրելով անհրաժեշտ դիտողություններ, հանձնարարականներ, առաջարկություններ: | ուս.տարվա ընթացքում | տնօրեն, մասնախմբի ղեկավարներ |
| 22 | Ձևավորել պետական խորհրդանիշների ցուցադրման անկյուն | ուս.տարվա ընթացքում | զինղեկ |
| 23 | Կազմակերպել հանդիպումներ հայկական բանակի հրամանատարների, ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ: | ուս.տարվա ընթացքում | զինղեկ, պատմության ուսուցիչ |
| 24 | Կազմակերպել այցելություն զոհված ազատամարտիկների հուշարձանին: | սեպտեմբերի 1-ին | զինղեկ ,ուսուցիչներ |
| 25 | ՀՀ ՊՆ N զորամասի և Պետրովկայի հիմնական դպրոցի համատեղ միջոցառումների պլանի համաձայն կազմակերպել միջոցառումներ նվիրված ՀՀ պետական տոներին, հիշատակի օրերին, զինված ուժերի զորատեսակների ստեղծման օրերին: | ուս.տարվա ընթացքում | Զինղեկ,դասղեկներ |

| Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքների | |
|---|---|
| **Ուժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
| Կիրառվում են համապատասխան տեխնոլոգիաներ,ուսուցումը համապատասխանեցվում է աշակերտների կարիքներին,ապահովված է անհրաժեշտ ուսումնական և ուսումնամեթոդական փաստաթղթերով,պահանջվող սարքավորումներով ուսումնական տարածքով և գույքով | Լաբորատորիաների և անհրաժեշտ սարքավորումների պակաս |
| Կազմակերպվում են | Որոշ սովորողների կողմից միջոցառումներին, |

| | |
|---|---|
| էքսկուրսիաներ,մրցույթներ,տոնական միջոցառումներ ,այցելություններ մշակույթի կենտրոններ,հանդիպումներ համայնքի հայտնի դեմքերի հետ, | խմբակներին մասնակցության պասիվություն,մոտիվացիայի պակաս |
| Դպրոցում իրականացվում են բաց դասեր,փոխադարձ դասալսումներ,մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներ։ | |
| Դպրոցի մանկավարժները մեթոդապես լավ են պատրաստված,բոլորն էլ մասնակցել են նոր չափորոշիչների վերապատրաստման դասընթացներին,նրանց կողմից դասերը,միջոցառումները պլանավորվում են և համապատասխանում են նպատակին։ Դասերը վերլուծվում են։ | Նոր չափորոշիչներով մշակված որոշ դասագրքերի պակաս 2-րդ,5-րդ,7-րդ դասարաններում |
| Աշակերտների առաջադիմության ընդհանուր մակարդակը բարձր է, որոշ սովորողների մոտ առկա են և թիմային , և անհատական ձեռք բերումներ՝ հատկապես շախմատի բնագավառում։ | |
| Տարրական դասարանի սովորողները ապահոված են տաք սննդով | |
| Երեխաները մեծ սիրով են մասնակցում շրջակա տարածքի մաքրության և բարեկարգման հետ կապված միջոցառումներին | |
| Առկա է հասարակության լիիրավ անդամի գիտակցության բարձր մակարդակ | |
| Դպրոցում սովորողների կողմից կա հարգանք և սիրալիր վերաբերմունք ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ | |
| Դպրոցում ապահովված է բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտը , բացառված է սովորողի անձի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնությունը՝բուլինգը | |
| Մասնակցային, թափանցիկ և բազմակարծիք ուսումնական միջավայրի առկայություն։ | |
| Սովորողների մասնակցություն Տաշիրի մշակույթի տան երգի պարի և շախմատի խմբակներին | Որոշ երեխաների մոտ կա պասիվություն մշակույթի նկատմամբ |
| Բուժքույրի մշտական ներկայություն | Չկա բուժենյակ |

**3.2 Դպրոցի մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծությունը**

Հեռավար դասերի,վերապատրաստումների,պարտադիր ատեստավորման,էլեկտրոնային մատյանների լրացման ժամանակ, օգտագործվում են  ժամանակակից նոր ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաներ , որը մեծ խնդիրներ առաջացրեց ուսուցիչների մոտ՝ ցույց տալով նրանց ՏՀՏ գիտելիքների պակասությունը: Վերջինս շարժառիթ դարձավ մանկավարժական աշխատողների մասնակցությանը վերապատրաստման դասընթացներին և սեմինարներին ։
Մինչև օրս  անցկացվել են բազմաթիվ  սեմինարներ և վերապատրաստումներ առցանց ու առկա եղանակով,անցկացվում են նաև MS Teams միասնական կրթական հարթակի միջոցով: 2023 թվականին բոլոր մանկավարժները մասնակցեցին ԿԶՆԱԿ-ի  կողմից իրականացրած նոր ՀՊՉ -ի վերապատրաստման դասընթացներին:
Մանկավարժի գործունեության գնահատումը ներդպրոցական կառավարման կարևորագույն գործառույթներից է: Եթե մանկավարժի աշխատանքի գնահատումը անարդար է,ապա այն կարող է ունենալ լուրջ բացասական հետևանքներ դպրոցի համար:Ուսուցչին անհրաժեշտ է գնահատել պարբերաբար`ողջ ուսումնական տարվա ընթացքում: ։ Իր կատարած աշխատանքի համար կարելի է խրախուսել դրամական պարգևով , պատվոգրով, ինչպես նաև մրցանակով,ամսվա/տարվա/ լավագույն ուսուցիչ,դասղեկ:
Դպրոցում մանկավարժական աշխատակցիների թիվը 10  է, որի մեջ ներառված են վարչակառավարչական անձնակազմը և այլ  հաստիքացուցակով գրանցված աշխատակիցները: Պետրովկայի հիմնական դպրոցում մանկավարժներից 6-ը ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, վերջին 3 տարում վերապատրաստվել  են բոլոր ուսուցիչները: Միջին մասնագիտական կրթություն ունեցող երեք ուսուցիչներ չհաղթահարեցին կամավոր ատեստվորման  անցումային շեմը  և ազատվեցին աշխատանքից,սակայն մասնագետ չլինելու պատճառով ժամանակավոր ընդունվեցին աշխատանքի մինչև թափուր տեղի մրցույթները կայանալը:

Պետրովկայի հիմնական դպրոցի բոլոր մանկավարժները  2015 թվականին  մասնակցել են ներառական կրթության վերապատրաստման դասընթացներին և պատրաստ են ստացած գիտելիքները ներդնել ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Մանկավարժների հաստիքացուցակը  ներկայացված է աղյուսակում.

| Առարկան | Հաստիքի     քանակը | Նշումներ |
|---|---|---|
| Դասվար | 2 | |
| Մաթեմատիկա,ֆիզիկա | 1 | |
| Հայոցլեզու | 1 | |
| Ռուսացլեզու,անգլերեն | 1 | |
| Քիմիա ,Կենսաբանություն, Տեխնոլոգիա | 1 | |

| | | |
|---|---|---|
| Աշխարհագրություն,ֆիզկուլտուրա,երաժշտություն | 1 | |
| ՆԶՊ | 0.5 | հեռավար |
| Ինֆորմատիկա | 1 | |
| Հոգեբան | 0,5 | թափուր |
| Ուսուցչի օգնական | 0,5 | թափուր |
| Պատմություն,ՀԵՊ | 1 | |
| Գրադարանավար | 0,75 | թափուր/երեխայի խնամքի արձակուրդ/ |

2020-2024 թթ.պարտադիր ատեստավորում անցել են 8 ուսուցիչ, տարակարգ ունեցող ուսուցիչ չունենք, իսկ 2023 թ-ին կամավոր ատեստացիային մասնակցել են երեք ուսուցիչ:

**Ուսուցիչների տարիքային կազմը ըստ տարիների**

| Ուսուցիչների տարիքային կազմը | 2020-2021 ուս.տարի | 2021-2022 ուս.տարի | 2022-2023 ուս.տարի | 2023-2024 ուս.տարի |
|---|---|---|---|---|
| մինչև 30 տարեկան | 2 | 2 | 1 | 0 |
| 31-40 տարեկան | 3 | 3 | 2 | 2 |
| 41-50 տարեկան | 4 | 4 | 3 | 3 |
| 51-55 տարեկան | 1 | 1 | 3 | 3 |
| 56 տարեկան և ավելի | 0 | 0 | 0 | 1 |

**Ուսուցիչների դասաժամերի շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը**

| | 2020-2021 ուս․տարի | 2021-2022 ուս․տարի | 2022-2023 ուս․տարի | 2023-2024 ուս․տարի |
|---|---|---|---|---|
| Ուսուցիչների թիվը | 9 | 10 | 9 | 9 |
| Միջին դրույքաչափը | 17.88 | 16.9 | 18.11 | 23,67 |

| Մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները | |
|---|---|
| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| Դպրոցում անցկացվում են բարձր որակի ռազմահայրենասիրական միջոցառումներ և դասեր | |
| Ուսումնադաստիարակչական աշխատանքների,դասղեկների,մասնախմբերի պլանների առկայություն և հաշվետվությունների ներկայացում սահմանված կարգով | |
| Անձնակազմի բոլոր անդամները մասնակցել են «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կողմից կազմակերպված ՀՊՉ-ի վերապատրաստման դասընթացներին: | Կամավոր ատեստավորմանը,տարակարգի բարձրացմանը մասնակցելու պասիվություն |
| Կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ և փորձի փոխանակում դպրոցի ու այլ դպրոցների մանկավարժների հետ,դրանց արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի և մեթոդմիավորման նիստերի ժամանակ՝ցուցաբերվելով անհրաժեշտ մեթոդական և մասնագիտական օգնություն: | |
| Խրախուսվում են ուսումնական տարվա ընթացքում լավ առաջընթաց դրսևորած մանկավարժները | |
| Մանկավարժական անձնակազմի մեծ մասը տիրապետում է աշակերտակենտրոն,ինտերակտիվ,մասնակցային մեթոդներին և կիրառում դասավանդման ընթացքում | Նախաձեռնողականության ,ինքնուրույնության պակաս |
| Մանկավարժները տիրապետում են MS Teams հեռավար հարթակին,օգտվում են կրթական ռեսուրսներից: | Ուսուցչական համակազմում, հատկապես միջին տարիքից բարձր, նկատվում է համակարգչային հմտությունների պակաս |
| Պարտադիր գործածության բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝էլեկտրոնային,լրացվում են սահմանված կարգին համապատասխան և ժամանակին: | |
| 9 մանկավարժներից 6-ը ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն | Մանկավարժներից երեքը ունեն մ/մ կրթություն,սակայն ունեն քսան տարուց ավելի մասնագիտական ստաժ |
| Ուսուցիչները կարողանում են օգտվել կրթական կայքերից,բոլորը գրանցված են Teams-ի հարթակում: | ՏՀՏ-ի ոչ լիարժեք կիրառում |
| Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի իրականացում | |
| Ուսումնադաստիարակչական աշխատանքը | EMIS.am հարթակում էլեկտրոնային |

| | |
|---|---|
| իրականացվում է ՏՀՏ-ի միջոցով | մատյանների լրացումը կատարվում է որոշակի թերություններով |
| Առկա է մանկավարժական վերապատրաստված համակազմ,կամավոր ատեստավորման մասնակցելու հնարավորություն և խրախուսում | Խնդիրներ են առաջանում ԿԱՊԿՈՒ աշակերտների գնահատման հետ կապված, քանի որ հաճախ ծնողները հրաժարվում են ընդունել գնահատման կարևորությունը, արգելում և խոչընդոտում են հոգեբանի աշխատանքին: |
| Մանկավարժներ իրենց աշխատանքի համար խրախուսվում են՝ դրամական,շնորհակալագիր,պատվոգիր | |
| Անձնակազմի պաշտոնների նկարագիրը համապատասխանում է օրենսդրությանը | ՆԶՊ ուսուցչի թափուր պաշտոնի առկայություն |
| Անձնակազմում առկա է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ | |
| Դպրոցում ապահովված է մանկավարժական ինքնավարության,ազատության,դրական և ապահով մթնոլորտ բոլոր մասնակիցների համար | էլեկտրոնային գրադարանի բացակայություն |
| Ինքնակրթության,ինքնակատարելագործման ռեսուրսների առկայություն | Ինքնակրթությամբ զբաղվում են ոչ բոլոր ուսուցիչները |
| Վերապատրաստումներ,սեմինարներ,դասալսումներ,բաց դասեր | Փոխադարձ դասալսումների պակաս |
| Դասապրոցեսում օգտագործվում են տարբեր մեթոդներ ամբողջ դասարանին դասապրոցեսում ներառելու համար | Էլեկտրոնային գրատախտակի բացակայություն |
| Առցանց ինտերակտիվ ռեսուրսները, վիրտուալ լաբորատորիաները օգտագործվում են տարբեր առարկաների լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման համար | Որոշ ուսուցիչներ լավ չեն տիրապետում ՏՀՏ գործիքներին,սակայն ստանում են անհրաժեշտ աջակցություն տնօրենության և կոլեգաների կողմից |

**3.3 Համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերի նկարագրություն**

Պետրովկայի հիմնական դպրոցի **կառավարման մարմիններն են՝**

1. հիմնադիրը՝ի դեմս ՀՀ Կառավարության,
2. ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը,
3. Լոռու մարզպետարանը,
4. դպրոցի կառավարման միացյալ խորհուրդը,
5. դպրոցի տնօրենը և վարչատնտեսական համակարգողը

Դպրոցը իր գործունեությամբ համապատասխանում է **պետության կրթական քաղաքականության**

**միտումներին**՝ նոր ներդրված չափորոշիչների պահանջների կատարմամբ:Կրթության որակի և սովորողների առաջադիմությունը խրախուսելու նպատակով համագործակցում է ուսումնական գործընթացի շահառուների հետ և ներգրավում է համայնքին:
Պետրովկայի հիմնական դպրոցը սերտ կապեր ունի համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ: Նախագծային և այլ աշխատանքների իրականացման ժամանակ իրականացվում են համայնքի կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն՝ հետագայում օգտագործելով թեմաների ընտրության ժամանակ:Դպրոցը արդյունավետ համագործակցում է անչափահասների գծով,մանկավարժահոգեբանական կառույցների հետ:

Դպրոցը սերտ համագործակցության անմիջական կապ ունի՝
**Լոռու մարզպետարանի** -հիմնականում կապը արտահայտվում է տարիֆիկացիայի և ուսումնական պլանների հաստատման,դասագրքերի և ուսումնական նյութերի մատակարարման,ֆինանսական և գույքագրման հաշվետվությունների ներկայացման,ուսուցիչների և տնօրենի թափուր տեղի մրցույթների հայտարարությունների հետ կապված ,փոխադարձ այցելությունների ՝ստուգումների և սեմինարների տեսքով, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգ և այլն:
**ՀՀ ԿԳՄՍ նախարարության**- կապը արտահայտվում է հրամանների,իրավական ակտերի կատարմամբ, լիցենզավորման ,տնօրենի հավաստագրման, թափուր աշխատատեղերի՝տնօրենների,վարչատնտեսական մասի համակարգողի և ուսուցիչների թափուր տեղերի մրցույթների,վերապատրաստումների ու ատեստացիաների տեսքով և այլն:
**<<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն>>ՊՈԱԿ** -կապը արտահայտվում է դպրոցում ինտերնետ կապի, համակարգչային ուսումնական կենտրոնի, դպրոցների ինտերնետային համալիր էջի ստեղծման և շահագործման, ուսուցիչների ՏՀՏ վերապատրաստումների,կրթության կառավարման տեղատվական համակարգի/emis/ ներդրմամբ՝դպրոցի էլեկտրոնային գործավարություն և էլեկտրոնային մատյան, հեռավար ուսուցման կազմակերպման տեսքով:
**<<ԿԶՆԱԿ>>հիմնադրամի -** կապը արտահայտվում է վերապատրաստումների, ատեստավորումների, կրթական ծրագրերի և ուսումնական նյութերի, <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի տեսքով:
**Վանաձորի Դ․Վարուժանի անվան թիվ 16 հ/դ** - ը կազմակերպում է ՆԶՊ առարկայի հեռավար ուսուցում:Կազմակերպվում են սովորողների փոխադարձ այցելություններ:
**Տաշիրի ավագ դպրոցի** կողմից կատարվում են դասալսումներ ՀՊՉ –ի ներդրման շրջանակներում:
Դպրոցը համագործակցում է մարզի մյուս դպրոցների հետ դասագրքերի ձեռք բերման,փորձի փոխանակման հարցերում:
Դպրոցը համագործակցում է Վանաձորի պետական համալսարանի,Ստեփանավանի ագրարային քոլեջի հետ: Երեխաներից շատերը ուսումը շարունակում են նշված ուսումնական հաստատություններում:
Դպրոցը համագործակցում է <<Տաշիրի մշակույթի կենտրոն>>ՀՈԱԿ-ի հետ՝երեխաները մասնակցում են երգի պարի,շախմատի խմբակներին,զանազան մշակութային միջոցառումներին:
Դպրոցը համագործակցում է <<Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն>>ՊՈԱԿ-ի հետ՝ կատարվում են այցելություններ և հետազոտություններ ԿԱՊԿՈՒ երեխաների հայտնաբերման համար:

Դպրոցը համագործակցում է Տաշիրի ոստիկանության անչափահասների գործերով բաժնի/դասը վարում է ոստիկանը/ ,ԱԻՆ-ի /արտակարգ իրավիճակների վերաբերյալ վարժանքներ/ և N զորամասի հետ:

Դպրոցը համագործակցում է <<Տաշիր բժշկական կենտրոն>>ՓԲԸ-ի հետ՝ բուժքույրի մշտական ներկայություն դպրոցում,դպրոցի անձնակազմի ամենամյա անվճար բուժզննում սոց փաթեթի շրջանակում:

Դպրոցը համագործակցում է Տաշիրի համայնքապետարանի հետ՝ աղբահանություն, ջրամատակարարում, էքսկուրսիաների համար միկրոավտոբուսի տրամադրում, շաբաթօրյակների կազմակերպում,ծառատունկ:

Դպրոցը համագործակցում է բանկերի, <<Գազպրոմ Արմենիա>>ՓԲԸ-ի, <<Հայաստանի Էլեկտրական ցանցեր >>ՓԲԸ-ի հետ:

| Դպրոցի համագործակցության վերլուծության | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| **Լոռու մարզպետարանի** -հիմնականում կապը արտահայտվում է տարիֆիկացիայի և ուսումնական պլանների հաստատման, դասագրքերի և ուսումնական նյութերի մատակարարման, ֆինանսական և գույքագրման հաշվետվությունների ներկայացման, ուսուցիչների և տնօրենի թափուր տեղի մրցույթների հայտարարությունների հետ կապված , փոխադարձ այցելությունների ՝ ստուգումների և սեմինարների տեսքով, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry համակարգ և այլն: | |
| **ՀՀ ԿԳՄՍ նախարարության**- կապը արտահայտվում է հրամանների,իրավական ակտերի կատարմամբ, լիցենզավորման ,տնօրենի հավաստագրման, թափուր աշխատատեղերի՝տնօրենների,վարչատնտեսական մասի համակարգողի և ուսուցիչների թափուր տեղերի մրցույթների,վերապատրաստումների ու ատեստացիաների տեսքով և այլն: | |
| **<<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն>>ՊՈԱԿ** -կապը արտահայտվում է դպրոցում ինտերնետ կապի, համակարգչային ուսումնական կենտրոնի, դպրոցների ինտերնետային համալիր էջի ստեղծման և շահագործման, ուսուցիչների ՏՀՏ | |

| | |
|---|---|
| վերապատրաստումների, կրթության կառավարման տեղատվական համակարգի /emis/ ներդրմամբ՝ դպրոցի էլեկտրոնային գործավարություն և էլեկտրոնային մատյան, հեռավար ուսուցման կազմակերպման տեսքով: | |
| **<<ԿԶՆԱԿ>>հիմնադրամի -** կապը արտահայտվում է վերապատրաստումների, ատեստավորումների, կրթական ծրագրերի և ուսումնական նյութերի տեսքով: | |
| **Վանաձորի Դ. Վարուժանի անվան թիվ 16 հ/դ** - ը կազմակերպում է ՆԶՊ առարկայի հեռավար ուսուցում: Կազմակերպվում են սովորողների փոխադարձ այցելություններ: | |
| **Տաշիրի ավագ դպրոցի** կողմից կատարվում են դասալսումներ ՀՊՉ –ի ներդրման շրջանակներում: | |
| **ՄԱԿ-ի ՊՀԾ-ի** <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի տեսքով: | |
| Դպրոցը համագործակցում է մարզի մյուս դպրոցների հետ դասագրքերի ձեռք բերման, փործի փոխանակման հարցերում: | |
| Դպրոցը համագործակցում է Վանաձորի պետական համալսարանի, Ստեփանավանի ագրարային քոլեջի հետ: Երեխաներից շատերը ուսումը շարունակում են նշված ուսումնական հաստատություններում: | Տրանսպորտային երթուղիների ոչ լիարժեք աշխատանք,հանրակացարանի բացակայություն: |
| Դպրոցը համագործակցում է <<Տաշիրի մշակույթի կենտրոն>>ՀՈԱԿ-ի հետ՝երեխաները մասնակցում են երգի պարի,շախմատի խմբակներին,զանազան մշակութային միջոցառումներին: | Որոշ սովորողների մոտ մշակույթի նկատմամբ հետաքրքրասիրության պակաս: |
| Դպրոցը համագործակցում է <<Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն>>ՊՈԱԿ-ի հետ՝ կատարվում են այցելություններ և հետազոտություններ ԿԱՊԿՈՒ երեխաների հայտնաբերման համար: | Ծնողների կողմից անհամաձայնություն երեխայի կարիքի գնահատման նկատմամբ: |
| Դպրոցը համագործակցում է Տաշիրի ոստիկանության անչափահասների գործերով բաժնի/դասը վարում է ոստիկանը/ ,ԱԻՆ-ի /արտակարգ իրավիճակների վերաբերյալ վարժանքներ/ և N զորամասի հետ: | |

| | |
|---|---|
| Դպրոցը համագործակցում է <<Տաշիր բժշկական կենտրոն>>ՓԲԸ-ի հետ՝ բուժքույրի մշտական ներկայություն դպրոցում,դպրոցի անձնակազմի ամենամյա անվճար բուժզննում սոց փաթեթի շրջանակում: | Դպրոցում բուժսենյակի բացակայություն, բուժզննման ընթացքում հերթերի գոյացում: |
| Դպրոցը համագործակցում է Տաշիրի համայնքապետարանի հետ՝ աղբահանություն, ջրամատակարարում, էքսկուրսիաների համար միկրոավտոբուսի տրամադրում, շաբաթօրյակների կազմակերպում,ծառատունկ: | Ջրամատակարարումը իրականացվում է գրաֆիկով:<br>Ծնողական համայնքի ոչ լիարժեք ներգրավվածությունը դպրոցի հիմնախնդիրներին:<br>Բարերարների բացակայություն: |
| Դպրոցը համագործակցում է բանկերի, <<Գազպրոմ Արմենիա>>ՓԲԸ-ի, <<Հայաստանի Էլեկտրական ցանցեր >>ՓԲԸ-ի հետ: | Էլեկտրական հոսանքի հաճախակի անջատումներ և խափանումներ: |

### 3.4 Դպրոցի խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են՝

**Մանկավարժական խորհուրդ** (ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները)- 10 մանկավարժ:

**Ծնողական խորհուրդ** (ընդգրկված են դպրոցի 1-9 դասարանների ծնողական խորհուրդների նախագահները - 9 ծնող:

**Աշակերտական խորհուրդ** (ընդգրկված են 5-9-րդ դասարանների սովորողներ) - 7 աշակերտ:

**Մեթոդական միավորումներ**( բոլոր 9 ուսուցիչներն ընդգրկված են առարկայական մասնախմբերում)

Մանկավարժական խորհուրդը բաղկացած է ուսումնական հաստատության բոլոր մանկավարժական աշխատողներից, ծնողական կոմիտեի նախագահից : Մանկավարժական խորհուրդը քննարկում է հարցեր կապված խորհրդի անդամների առաջադրման,դասաբաշխման,ուսումնական պլանների,սովորողների առաջադիմության,խրախուսման,ՀՊՉ-ի կատարման ,ԿԱՊԿՈՒ երեխաների հայտնաբերման,ներքին կարգապահական կանոնների և ուսումնական գործընթացի վերաբերյալ այլ հարցեր: Որոշումներ է ընդունում դպրոցի աշխատանքային ռեժիմի,սովորողների փոխադրման,քննություններին թույլատրելու,գովասանագրով պարգևատրելու,վերաքննություններ նշանակելու,դպրոցական բաղադրիչի ժամաքանակի ,ուսումնական գործընթացին վերաբերվող այլ հարցերի մասին:

Վերհանված հարցերն ըստ հնարավորության լուծում են ստանում և ըստ անհրաժեշտության ՝ քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերում ։

Աշակերտականխորհուրդը դպրոցում քաղաքացիական կրթության կարևորագույն տարրն է: Աշակերտական խորհուրդը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է կառավարման և մանկավարժական խորհուրդների նիստերին իրեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ: Ծնողական խորհուրդը գործում է իր լիազորությունների շրջանակում՝ դպրոցի կանոնադրության պահանջներին համապատասխան,նպաստում է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարմանը,առաջադրում է խորհրդի անդամության թեկնածուներ, ներկայացնում է մանկավարժներին խրախուսման,աջակցում է դպրոցին ԿԱՊԿՈՒ երեխաների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում: Ծնողները ժամանակին իրազեկվում են ուսումնական գործընթացի մասին,մասնակցում են կառավարման գործընթացին՝ներկայացնելով իրենց դիտարկումներն ու առաջարկները: Դպրոցում գործում են երեք առարկայական մասնախմբեր:Առարկայական մասնախմբերը քննարկում են ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը,մեթոդական ձեռնարկները, ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ը, կատարում է դասաժամերի նախնական բաշխումը,կազմակերպում դպրոցական օլիմպիադաներ և այլ գործառույթներ:

| Դպրոցի խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թույլ կողմերը | |
|---|---|
| **Ուժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
| Դպրոցի **կառավարման խորհուրդը** աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն | Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ,շրջանավարտների խորհուրդ |
| Դպրոցի կառավարման խորհուրդը հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը,ներքինկարգապահական,այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները | Պասիվություն տարբեր սեմինարներին |
| Դպրոցիկառավարման խորհուրդը Շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին | խորհրդի անդամների վերապատրաստման պակաս |
| Դպրոցում պարբերաբար անցկացվում են | |

| | |
|---|---|
| կառավարման խորհրդի հերթական և արտահերթ նիստեր տնօրենի մասնակցությամբ /խորհրդակցական ձայնի իրավունքով/: | |
| Կառավարման խորհրդի անդամներից յոթը ունեն բարձրագույն կրթություն<br>Որոշումները կայացվում են տնօրենի և կառավարման խորհրդի համագործակցության արդյունքում,ապահովելով բոլոր կողմերի մասնակցությունը | |
| Տնօրենը համագործակցում է տարածքային կառավարման մարմինների և<br>այլ կառույցների ու անհատների հետ,տեղական ինքնակառավարման մարմինների հետ | |
| **Ծնողական խորհրդի** կազմում դպրոցի բոլոր դասարանների ծնողական խորհուրդների նախագահներն են: | Իրազեկված չեն կանոնադրությամբ իրենց վերապահված բոլոր գործառույթներին |
| Դպրոցի ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է ինչպես դպրոցի տնօրենության,այնպես էլ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ: | |
| Ծնողական խորհուրդը կազմակերպում է էքսկուրսիաներ, ճանաչողական այցելություններ դեպի թանգարաններ,Մշակութային այլ հաստատություններ | |
| **Մանկավարժական խորհրդի** կազմում դպրոցի բոլոր մանկավարժներն են , ծնողխորհրդի նախագահը: Այն ձևավորված է 10 անդամից: Փորձառու և որակյալ մասնագետներ կան: | |
| Լաբորատոր փորձեր իրականացվում են վիրտուալ եղանակով | Լաբորատոր փորձեր չեն Իրականացվում լաբորատորիայի բացակայության պատճառով |
| Մանկավարժներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն,<br>Երեք մանկավարժներ ունեն միջին Մասնագիտական կրթություն՝մասնակցել են կամավոր ատեստացիային | Պասիվ մասնակցություն առարկայական օլիմպիադաներին |
| Դպրոցն օժանդակում է կադրերի առաջխաղացմանը՝ | Տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թվի բացակայություն |
| Դպրոցի մանկավարժները ակտիվորեն մասնակցում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող սեմինարներին և վերապատրաստումներին,տիրապետում են ՀՊՉ- ի պահանջներին | Էլեկտրոնային ինտերակտիվ մեթոդների կիրառության պակաս |
| **Մեթոդմիավորումներ** դպրոցում գործում է առարկայական երեք մեթոդմիավորում՝ | Պասիվ են առարկայական մրցույթներ, միջոցառումներ կազմակերպելու գործում: |

| | |
|---|---|
| • հումանիտար<br>• բնագիտական<br>• տարրական դասարանների | |
| Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրերի կատարում | |
| Գումարվում են նիստեր, անցկացվում են դասալսումներ | |
| **Աշակերտականխորհուրդը** | |
| Աշակերտական խորհուրդը ակտիվ մասնակցում է դպրոցի գործունեությանը, հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, նախաձեռնում և կազմակերպում միջոցառումներ, նպաստում ներքին կարգապահական կանոնների պահպանմանը | Պասիվ են առարկայական մրցույթներ, միջոցառումներ կազմակերպելու գործում: |
| Աշակերտները տիրապետում են ՏՀՏ գործիքներին,ապահովված են դասագրքերով: | Բնագիտական առարկաների նկատմամբ պասիվություն |

**3.5 Դպրոցի շենքային պայմանների նպատակային գործածության վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը**

ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոցի շենքը շահագործման է հանձնվել 2003 թվականին:Դպրոցը մի հարկանի է , շենքը զբաղեցնում է 401 քառ․մ տարածք, ունի 1600 քառ․մ ցանկապատված բակային տարածք: Բարեկարգ է, մասնակի վերանորոգված և հնարավորինս հարմարեցված: Դպրոցում ուսումնառությունը կազմակերպվում է միահերթ: Հանրակրթական լիցենզիայով սահմանված աշակերտների թիվը 70 է՝ ընդ որում տարրական հանրակրթական լիցենզիայով սահմանված տեղերը 30 են, իսկ հիմնականում՝ 40 : Աշակերտների թիվը նախորդ ուս.տարվա նկատմամբ աճել է 9-ով , որը պայմանավորված է համայնքի բնակչության սոցիալտնտեսական բավարար վիճակով և արտագաղթի բացակայությամբ:
Դպրոցի 9 ուսուցիչների համար ուսուցչանոցին հատկացված տարածքը կազմում է 25 քառ.մ: Դպրոցում կա 7 դասասենյակ, մեկ համակարգչային սենյակ /որը ծառայում է նաև ՆԶՊ կաբինետ/, ժամանակակից խոհանոց- ճաշարան, սննդի պահեստ, գրադարան, մեկ միջոցառումների դահլիճ, / որը ծառայում է նաև որպես սպորտդահլիճ-81 քառ.մ՝ հարմարեցվումէ/, վարչական 1 սենյակ, 3 սանհանգույց, կաթսայատուն: Պարբերաբար աշխատանքներ են իրականացվում գույք ձեռք բերելու ուղղությամբ:

Սանհանգույցները նորոգված են սակայն մեկն է հարմարեցված ԿԱՊԿՈՒ երեխաների համար և կարիք կա մնացածների նորոգման ու հարմարեցման: Վերջին տարիներին դպրոցի խնայված

ֆինանսական միջոցների հաշվից վերանորոգվել է սպորտդահլիճը, դասասենյակների հատակները մասնակի վերանորոգվել են, տեղադրվել են եվրոպատուհաններ, դպրոցը գազաֆիկացվել է, որի արդյունքում տեղադրվել է ջեռուցման կենտրոնացված համակարգ: Դպրոցը ունի ժամանակակից ճաշարան, մշտական ջրամատակարարում: Դպրոցին անմիջական հարևանությամբ գտնվում է գյուղի բուժկետը, որի աշխատողը երեխաներին մշտական հսկողության տակ է պահում:

**Ներկայացված են դպրոցի շենքային պայմանները, դասասենյակները և դրանց ընդհանուր վիճակը՝**

| Տարածքի անվանումը | Չափը՝ քառ.մ | Փաստացի վիճակը |
|---|---|---|
| Աշխատասենյակ | 17 | լավ |
| Ուսուցչանոց | 25 | լավ |
| Ճաշարան | 16.8 | գերազանց |
| Դահլիճ | 81.2 | լավ |
| Գրադարան | 16.4 | բավ |
| Պահեստ | 8.6 | գերազանց |
| Համակարգչային սենյակ | 16.8 | լավ |
| Դասասենյակ 1 | 8 | լավ |
| Դասասենյակ 2 | 16.8 | լավ |
| Դասասենյակ 3 | 16.8 | լավ |
| Դասասենյակ 4 | 14.8 | լավ |
| Դասասենյակ 5 | 15.2 | լավ |
| Դասասենյակ 6 | 14.4 | լավ |
| Դասասենյակ 7 | 16.8 | լավ |
| Մուտք | 2.1 | լավ |
| Միջանցք | 126.2 | լավ |
| Սանհանգույց 1 | 3 | լավ |
| Սանհանգույց 2 | 3 | լավ |
| Սանհանգույց 3 | 3 | լավ |
| Կաթսայատուն | 2.1 | լավ |
| | | |

**Ներկայացված է դպրոցի նյութատեխնիկական բազան**

| հ/հ | Գույք, սարքավորումներ | Քանակը/հատ/ | Վիճակը |
|---|---|---|---|
| 1 | Գրատախտակ | 5 | բավ |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Աշակերտական սեղան | 12 | բավ |
| 3 | Սեղան /մեծ/ | 1 | բավ. |
| 4 | Բազմոց/մեծ/ | 1 | բավ. |
| 5 | Բազմոց/փոքր/ | 1 | բավ. |
| 6 | բազկաթոռ | 2 | բավ. |
| 7 | Էլ.տաքացուցիչ/ռադիատոր/ | 5 | բավ |
| 8 | շախմատ | 1 | բավ |
| 9 | Աթոռ աշ. | 21 | բավ |
| 10 | գրասեղան | 2 | բավ |
| 11 | Թիկնաթոռ/փոքր/ | 1 | բավ |
| 12 | Էլ.վառարան | 1 | բավ |
| 13 | Հեռուստացույց | 1 | վատ |
| 14 | Տեսամագնիտոֆոն/ԴՎԴ/ | 1 | վատ |
| 15 | Երաժշտական կենտրոն | 1 | վատ |
| 16 | Հեռուստացույցի տակդիր | 1 | լավ |
| 17 | Համակարգիչ աշխատանքային | 1 | լավ |
| 18 | Համակարգիչ ուսումնական | 3 | 1 գերազ.,1 լավ, 1 չաշխատող |
| 19 | Պահարան | 1 | բավ |
| 20 | Թիկնաթոռ/մեծ/ | 1 | բավ |
| 21 | Փոքր աթոռ | 5 | բավ |
| 22 | Մանկական սեղան | 6 | բավ |
| 23 | Մանկական աթոռ | 8 | բավ |
| 24 | Ուսուցչի սեղան | 1 | բավ |
| 25 | Պահարան մանկական | 2 | բավ |
| 26 | Մանկական սեղան/անկյ./ | 2 | բավ |
| 27 | Գրքերի պահարան | 6 | բավ |
| 28 | Շախմատի սեղանի աթոռ | 10 | լավ |
| 29 | Հոսանքի գեներատոր | 1 | գերազանց |
| 30 | Տոնածառ | 1 | գերազանց |
| 31 | Շախմատի սեղան | 6 | լավ |
| 32 | Տպիչ լազերային | 2 | լավ |
| 33 | Բազմաֆունկց .տպիչ HP M1536 | 1 | լավ |
| 34 | Հոսանքի սնուցման սարք UPS | 3 | 2 լավ,1 բավ |
| 35 | Կալորիֆեր BALLU | 7 | լավ |
| 36 | Գազօջախ NURGAZ 2 տեղ | 1 | բավ |
| 37 | Աթոռ ուսուցչի | 12 | լավ |
| 38 | Պրոյեկտոր | 2 | գերազ. |
| 39 | Դարակաշար 4 հարկ | 2 | գերազ. |
| 40 | Ջերմաչափ GP-200 | 1 | բավ |
| 41 | Վառարան ASEL | 1 | բավ |
| 42 | Գրատախտակ մարկերով | 1 | լավ |
| 43 | Սալօջախ էլեկտ. 4 աչք ջեռոց | 1 | գերազ. |
| 44 | Սեղան աշխատանքային | 1 | գերազ. |
| 45 | Մոնիտոր Dell | 1 | գերազ. |
| 46 | Բազմաֆունկց.սարք Canon | 1 | գերազ. |
| 47 | Տեսախցիկ LOGITECH | 1 | գերազ. |

| | | | |
|---|---|---|---|
| 48 | Եռոտանի Hama star64 | 1 | գերազ. |
| 49 | Պրոյեկտորի էկրան | 1 | գերազ. |
| 50 | Բարձրախոս Genius | 1 | գերազ. |
| 51 | Խոսափող համակարգչի | 1 | գերազ. |
| 52 | G-16 տիպի գազի հաշվիչ | 1 | գերազ. |
| 53 | Սառնարան «Бирюса 135» | 1 | գերազ. |
| 54 | Էլեկտ.կշեռք | 1 | գերազ. |
| 55 | Լվացարան 2 թաս 1100*530*850 | 1 | գերազ. |
| 56 | Ջեռուցման համակարգ | 1 | գերազ. |
| 57 | Էլեկտ.սալիկ | 1 | բավ |
| 58 | գնդակ | 3 | բավ |
| 59 | Աթոռ աշակերտական | 12 | գերազանց |

**Ներկայացված են լուսանկարներ դպրոցի վերանորոգումից առաջ և հետո**




















ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ
ԱՎԵԼԻ


ՊԵՏՐՈՎԿԱՅԻ










Նոր ներդրվող չափորոշչային պահանջներով պայմանավորված ուսումնական գործընթացի իրականացման համար արդեն առաջացել են լրացուցիչ դժվարություններ: Ուստի կա դասասենյակների ավելացման, լաբորատորիայի համար տարածք հատկացնելու կարիք: Ներկա դասասենյակները, քիչ քանակով տարբեր մաշվածության գույքով, չի կարող ապահովել ժամանակակից պահանջներին:

2024-2025 թվականին նախատեսվում է թարմացնել դպրոցի կահավորումը,ձեռք բերել մարզագույք,վերանորոգել փտած հատակները:

| Դպրոցի շենքային պայմանները | |
|---|---|
| **Ուժեղ կողմերը** | **Թերությունները** |
| Հաստատության շենքային պայմանները համապատասխանում են շահագործման անվտանգության առկա նորմատիվներին, ինչպես նաև ըստ կարգի պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: | Լաբորատորիաների,առարկայական սենյակների , շախմատի դասասենյակի բացակայություն |

| | |
|---|---|
| Դպրոցն ունի տարհանման ելք՝ ֆորսմաժորային իրավիճակների համար նախատեսված | Դիտակտիկ նյութերի և լաբորատոր գույքի բացակայություն |
| Բակային հատվածը լուսավորված է | Բակային տարածքը բարեկարգված չէ |
| Գյուղի բուժկետը գտնվում է դպրոցի անմիջական հարևանությամբ | Բուժսենյակի բացակայություն |
| Ունի ճաշարան, որն երեխաներին ապահովում է ամենօրյա տաք սննդով | |
| Ունի գեղարվեստական գրքերով հագեցած հարուստ գրադարան | Գրադարանը ունի վերանորոգման կարիք, դասագրքերը թվայնացված չեն |
| Դպրոցի տարածքը ցանկապատված է | Ապաստարանի բացակայություն |
| Դպրոցի ամբողջական հատակը գտնվում է մեկ հարթության վրա, որն ապահովում է անվասայլակների անարգել տեղաշարժ | Դռների շեմերի առկայություն |
| Մասնակի վերանորոգված դպրոց | Դասասենյակները և միջանցքն ունեն վերանորոգման կարիք |
| Ամբողջությամբ կտուրը կղմինդրից է | Պահակակետի բացակայություն |
| Դպրոցի մարզադահլիճը կարելի է օգտագործել ցուցադրությունների, միջոցառումների համար | Սպորտդահլիճի փոքր չափս՝81քառ․մ, չունի հանդերձարան, Մարզագույքի բացակայություն, |
| Դպրոցը գազաֆիկացված է ,առկա է BAXI ջեռուցման համակարգ,խոհանոցը ապահովված է տաք ջրով | Շենքում տաք ջրամատակարարումը բացակայում է։ |
| Սանհանգույցները վերանորոգված են, առանձնացված տղաների, աղջիկների և ուսուցիչների համար, որոնցից մեկը՝ հենաշարժային խնդիրներ ունեցողների համար է | |
| Դպրոցում առկա է էլեկտրոնային դասեր վարելու համար նախատեսված նյութատեխնիկական բազա | ՆԶՊ առարկայական կաբինետի և համակարգչային կաբինետի համատեղ օգտագործումը |
| Առկա է ինտերնետային հասանելիություն՝ Wi-Fi սարք, որը հասանելի է դպրոցի ողջ տարածքում | |
| Դպրոցն ունի 1200 քմ բակային տարածք | Տարածքը բարեկարգված չէ |
| Շենքային պայմանների համապատասխանություն ԿԱՊԿՈՒ երեխաների համար, դպրոցն ունի թեքահարթակ | Չունի հովանավոր |
| Պատուհանների մեծ մասը և | Աշակերտական սեղանների և աթոռների |

| | |
|---|---|
| գլխավոր մուտքը փոխարինված են եվրոպատուհաններով ու եվրոդռներով | մաշվածություն |
| Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում | Դպրոցի դիմաց գտնվող ճանապարհը՝ 50մ ասֆալտապատված չէ |
| Դպրոցը միահարկ է | Չունի նկուղային հարկ |
| Դպրոցը միակն է գյուղում, ամենամոտ դպրոցը գտնվում է Նորաշեն գյուղում 5 կմ հեռավորության վրա | Դպրոցը ներառված է կրթական որակյալ ծառայությունների հասանելության ապահովման ծրագրում |
| Դպրոցի հարևանությամբ առկա է ֆուտբոլի դաշտ | |
| Դպրոցի տարածքը հնարավորություն է տալիս բացօթյա դասեր և սպորտլանդիաներ կազմակերպելու համար: | |
| Ունի վերանորոգված մարզադահլիճ, որը նաև օգտագործվում է որպես հանդիսությունների դահլիճ | Ներքին հարդարման աշխատանքների կարիք ունի |
| Դպրոցի դիրքը աղետների և ռիսկերի կառավարման տեսակետից բարենպաստ է | Բնական աղետներ/՝երկրաշարժ,քամիներ/ |
| | |
| | |
| | |

Հիմնախնդիր – Դպրոցի նյութատեխնիկական բազայի անհամապատասխանություն ժամանակակից կրթական պահանջներին: Դպրոցի շենքային և տեխնիկական վիճակի գնահատումը՝ լավ: Լաբորատոր և առարկայական սենյակների անհրաժեշտություն: Տարածքի բարեկարգում, նյութատեխնիկական բազայի բարելավում և թարմացում, ձեռնարկատիրական գործունեության հիմնում՝ որպես ֆինասական վիճակի ապահովում:

**Դպրոցի ֆինանսական ծախսերի վերլուծությունը**

Դպրոցի բյուջեի նախագծման, հաշվետվողականության և հանրայնացման գործառույթների անմիջական պատասխանատուն դպրոցի տնօրենն է: Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքէջում: Դպրոցի առկա և ձեռք բերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում:
Պետրովկայի հիմնական դպրոցը ներառված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի 1790-Ա/2 հրամանով հաստատված **Հայաստանի Հանրապետության կրթական որակյալ**

**ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում** ներառված ուսումնական հաստատությունների ցանկում: Նոր ֆինանսական ծրագրերով և նոր ՀՊԶ –ի ներդրումով պայմանավորված բարենպաստ պայմաններ ստեղծվեցին դպրոցի բյուջեի համար: Նախ ավելացավ դասարանների թիվը՝ 5-ից դարձավ 7, այնուհետև ավելացավ աշակերտների թվաքանակը՝ 20-ից դարձավ 29, որն էլ իր հերթին խթան հանդիսացավ աշխատակիցների աշխատավարձի բարձրացմանը: Դպրոցը ունի բավարար չափով խնայված ֆինանսական միջոցներ: Խնայված միջոցները ավելանում են հեռավար դասերի ,թափուր աշխատատեղերի,ֆինանսները ճիշտ պլանավորելու հաշվին: 2013թվականին դպրոցի ուսուցիչների աշխատավարձը եղել է բազայինի նկատմամբ 75%,այնուհետև տարիների ընթացքում բյուջեի ճիշտ պլանավորելու հաշվին ուսուցչի դրույքաչափը դարձել է 123700 դրամ,որը փոքր դպրոցների ցուցակում բարձր ցուցանիշ է: Մինչև օրս դպրոցը ֆինանսի պակասի խնդիր չի ունեցել, պետական բյուջեից լրացուցիչ գումար չի ստացել: Վերանորոգման, գազաֆիկացման, ջեռուցման համակարգի, եվրոպատուհանների տեղադրման ծախսերը կատարվել են դպրոցի խնայված, կուտակված միջոցներից:

| Բյուջեի ծախսերը |
|---|
| Աշխատավարձ և հավելավճարներ |
| Դպրոցի շենքի պահպանման ծախսեր |
| Պարտադիր վճարներ |
| ՏՀՏ սարքավորումներ |
| Գրասենյակային նյութեր |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ |
| Աշխատողների մասնագիտական զարգացման ծառայություններ |
| Կենցաղային և հանրային նյութեր |
| Էներգետիկ ծառայություններ |
| Աղբահանություն |
| Այլ ծախսեր |

## Բյուջեի տարեկան ֆինանսավորումը

| Բյուջե | 2022 | 2023 |
|---|---|---|
| Տարեկան ֆինանսավորում/սուբսիդիա տարրական և հիմնական ծրագրերով/ | 24927.9 հազար | 27372.8 հազար |
| Տարեսկզբի մնացորդը | 2515.2 | 3235.6 |
| Տարեվերջի մնացորդ | 3235.6 | 1472.2 |

## Բյուջեի տարեկան ծախսերը թվերով

| Բյուջեի ծախսերը | Ծրագրային 2022թ. հզ. դրամ | Փաստացի ծախս 2022թ. հզ. դրամ | Ծրագրային 2023թ. հզ. դրամ | Փաստացի ծախս 2023թ,հզ. դրամ |
|---|---|---|---|---|
| Աշխատավարձ և հավելավճարներ | 24132,7 | 22347,2 | 26437.4 | 25075.9 |
| Էներգետիկ ծառայություններ | 1000,0 | 467,7 | 800.0 | 661.1 |
| Գրասենյակային նյութեր | 100,0 | 25,4 | 80.0 | 30.1 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 253,0 | 242,8 | 314.0 | 284.6 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աշխատողների մասնագիտական զարգացման ծառայություններ | 48.0 | 48.0 | 48.0 | 48.0 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 449,4 | 427,9 | 468.0 | 468.0 |
| Ներքին գործողումներ | 150,0 | 119,0 | 119.0 | 105.0 |
| Պարտադիր վճարներ | 50,0 | 34,3 | 57.2 | 53.1 |
| Այլ ծախսեր // | | | 61.8 | 38.4 |
| Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 800,0 | 76,0 | 769.0 | 767.9 |
| Հատուկ նպատակային այլ նյութեր | 50 | 0 | 34.0 | 24.0 |
| Մասնագիտական ծառայություններ | 369,8 | 369,8 | 1090.0 | 1060.8 |

## 4. Նպատակների և խնդիրների սահմանումը.

| N | ՆՊԱՏԱԿ | ԽՆԴԻՐՆԵՐ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ և ԳՈՐԾԻՔՆԵՐ | | ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ուսումնական հաստատության շենքային պայմանների և բակային տարածքի բարելավում | 1. Ներսի նորոգման և հարդարման աշխատանքներ | 1. Դպրոցի դասասենյակների և միջանցքի նորոգում, | 2026-2027թթ Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | Ֆինանսական միջոցներ,համապատասխան ծրագրեր,մարդկային ռեսուրսներ,դրամաշնորհներ,շինանյութ,մարդկային ռեսուրսներ,աշխատանքային գործիքներ | գերազանց | Շենքի ներսի մասը վերանորոգվել է, | Ֆինանսական միջոցների բացակայության, ձեռնարկատիրական գործունեության իրացման փորձի պակաս, մոտիվացիայի պակաս փոքր դպրոցների միացում | Բյուջեի խելացի բաշխում, գտնել ճիշտ լուծումներ, դիմել դիմել վերադասին, համայնքին, բարերարներին, մասնակցել դրամաշնորհային ծրագրերի, գտնել արտաբյուջետային միջոցներ, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ |
| | | | | | | բավարար | Կամ դասասենյակներն են նորոգվել,կամ միջանցքը | | |
| | | | | | | անբավարար | Նախատեսված գործողությունները չեն իրականացվել | | |
| | | | 2. դռների և պատուհանների փոխարինում | 2025-26թթ Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | | գերազանց | դռները և պատուհանները փոխվել են | | |
| | | | | | | բավարար | Փոխվել են կիսով չափ | | |
| | | | | | | անբավարար | Նախատեսված գործողությունները չեն իրականացվել | | |
| | | 2.Դպրոցի բակի բարեկարգման աշխատանքներ | 1. Տնկիների ցանում և տարածքի կանաչապատում | 2024-2025թթ Տնօրեն, վարչատնտեսական համակարգող,դասղեկ | | գերազանց | Տնկիները ցանվել են և տարածքը կանաչապատվել է: | | |
| | | | | | | բավարար | Կատարվել է 50%-ով | | |
| | | | | | | անբավարար | Նախատեսված գործողությունները չեն իրականացվել | | |
| | | | 2. Բակի հարթեցում և ասֆալտապատում | 2027-2028 Տնօրեն,համակարգող,դասղեկներ | | գերազանց | Կից տարածքը բարելավվել է, | | |
| | | | | | | բավարար | Բարեկարգվել է մասամբ | | |
| | | | | | | անբավարար | Նախատեսված | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ր | գործողությունները չեն իրականացվել | | |
| | | 3․Աշակերտների ազատ ժամանակի կառավարում՝ մինի բացօթյա մարզահրապարակի կառուցում | 3․Գտնել ֆինանսական աղբյուրներ,կազմել նախահաշիվ,նախագիծ,ներգրավել շինարարական կազմակերպությունների | 2026-2028թթ Տնօրեն, վարչատնտեսական համակարգող,դասղեկներ | | գերազանց | Մինի մարզահրապարակը կառուցվել է | | |
| | | | | | | բավարար | Մինի մարզահրապարակը կառուցվել է կիսատ | | |
| | | | | | | անբավարար | Մինի մարզահրապարակը չի կառուցվել | | |
| 2 | Դպրոցի համալրում նյութատեխնիկական բազայով և անվտանգ ուսումնական միջավայրի ապահովում | 1․Դասերը արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերում | ՏՀՏ գործիքների և էլեկտրոնային ռեսուրսների ձեռքբերում | 2024-2029 Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | Ֆինանսական միջոցներ,դրամաշնորհային ծրագրեր,բարերարներ | գերազանց | Ձեռք են բերվել դիդակտիկ նյութեր,սարքավորումներ,դասարանները կահավորվել են անհրաժեշտ գույքով | Ֆինանսի բացակայություն, շահագրգիռ կողմերի պակաս, դպրոցի ապագա միավորում այլ դպրոցի | Բյուջեի ճիշտ պլանավորում, խնայված միջոցների նպատակային օգտագործում, հաճախակի հանդիպումներ համայնքի և ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ |
| | | | | | | բավարար | Ձեռք են բերվել դիդակտիկ նյութեր,սարքավորումներ | | |
| | | | | | | անբավարար | Նախատեսված գործողությունները չեն իրականացվել | | |
| | | 2․Դասարանների հատակների նորոգում, դռների շեմերի հարթեցում | Դիմել մարզպետարան, համայնքապետարան,բարերաների,դպրոցի խնայված ֆինանսական միջոցներով կատարել մասնակի նորոգում | 2025-2026 Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | | գերազանց | Լրիվ նորոգվել են հատակները,շեմերը հարթեցված են | | |
| | | | | | | բավարար | Նորոգվել են հատակները կամ շեմերը | | |
| | | | | | | անբավարար | Չի կատարվել ոչ մեկը | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Կառավարման,խորհրդակցական մարմինների կողմից իրականացվող գործառույթների կանոնակարգում և հստակեցում,դերի բարձրացում, գործունեության որակի բարելավում | 1.Կառավարման մարմնի և խորհրդակցական մարմինների համագործակցում | 1. Խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթադաստիարակչական ծրագրերին,միջոցառումներին, սեմինարներին | 2024-2029 Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, դասղեկ ուսուցիչ,,ծնող | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, Կառավարման խորհուրդ,տնօրեն,դպրոցի խնդիրներով մտահոգված սրտացավ մարդիկ, խորհրդակցական մարմինների նիստերի արձանագրություններ | գերազանց | Մանակցությունը 100% | Խորհրդի անդամների մոտ մոտիվացիայի պակաս | Սեմինարների, դասալսումների, մանկավարժահոգեբանական ,մեթոդական զեկուցումների միջոցով ամրապնդել, խորհրդակցական մարմինների և դպրոցի սերտ կապը,կատարել ճիշտ դպրոցավարություն |
| | | | | | | բավարար | Մանակցությունը 50% | | |
| | | | | | | անբավարար | Չեն մասնակցում | | |
| | | | 2. Խորհրդակցական մարմինների հետ սերտ կապերի ձևավորում, նյութատեխնիկական բազայի բարելավման ուղղությամբ որոշումների ընդունում | | | գերազանց | Տնօրենի և կառավարման, խորհրդակցական մարմինների միջև կա փոխադարձ վստահություն և համագործակցություն | | |
| | | | | | | բավարար | Տնօրենի և կառավարման, խորհրդակցական մարմինների միջև կա թերահավատություն, ոչ բավարար վստահություն միմյանց հանդեպ | | |
| | | | | | | անբավարար | Տնօրենի և կառավարման, խորհրդակցական մարմինների միջև չկա համագործակցություն | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2.Աշակերտական խորհրդի դերի բարձրացում, նոր ծրագրերի և նախաձեռնությունների խրախուսում | 1. Աշակերտների համար էքսկուրսիաների ,պատմամշակութային վայրեր այցելություններ ի կազմակերպում | 2024-2029<br>Տնօրենություն դասղեկներ, ծնողներ,համայնք | Պետական բյուջե,սեփական միջոցներ, մարդկային ռեսուրսներ՝մանկավարժներ,ծնողներ, համայնք | գերազանց | Աշակերտները ակտիվորեն մասնակցում են դպրոցի կյանքին, կազմակերպում են միջոցառումներ | Աշակերտների՝միջոցառումներին ներգրավածության պակաս , | |
| | | | | | | բավարար | Աշակերտների մասնակցությունը դպրոցական կյանքին ոչ լիարժեք է, բայց նկատվում է հետաքրքրության աճ | | |
| | | | 2. Կազմակերպել միջոցառումներ, հանդիպումներ, բանավեճեր: | | | անբավարար | Աշակերտները ցանկություն չունեն մասնակցելու դպրոցական կյանքին | | |
| | | | 3. Ամրապնդել ուսուցիչ-աշակերտ, ծնող-աշակերտ,համայնք-աշակերտ հարաբերությունները | | | գերազանց | Աշակերտ – ուսուցիչ,ծնող,համայնք կապը ամուր է | Լրիվի մոտ մոտիվացիայի պակաս | |
| | | | | | | բավարար | Կապը թույլ է | | |
| | | | | | | անբավարար | Կապ չկա | | |
| | | 3.Դպրոց-ծնող կապի ուժեղացում | 1. Ծնողական խորհրդի մասնակցությունը դպրոցի առօրյային | 2024-2029<br>Տնօրենություն ,դասղեկներ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, ծնողական խորհուրդ | գերազանց | Ակտիվ մասնակցում են նիստերին, դպրոցի առօրյային | Ծնողների թերիհավատություն դպրոցի նկատմամբ | Սեմինարների, դասալսումների, մանկավարժահոգեբանական ծառայությունների,մեթոդական զեկուցումների միջոցով փոխել ծնողների |
| | | | | | | բավարար | Պասիվ են նիստերին,միջոցառումներին մասնակցությունը թերի է | | |
| | | | | | | անբավարար | Նիստերը ձևական են, դպրոցի առորյային չեն | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | մասնակցում | | կարծիքը դպրոցի նկատմամբ |
| | | | 2. Կազմակերպել սեմինարներ և հանդիպումներ ներառական կրթությունը ծնողներին իրազեկելու նպատակով | 2024-2029 Տնօրենություն,ՏՄԱԿ, դասղեկ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, մեթոդական գրքեր,էլեկտրոնային ռեսուրսներ,ծնողներ | գերազանց | Կազմակերպվում են սեմինարներ,հանդիպումներ,ծնողները ակտիվ մասնակցում են սեմինարներին, | | |
| | | | | | | բավարար | Կազմակերպվում են սեմինարներ,հանդիպումներ ,ծնողների մասնակցության պասիվություն | | |
| | | | | | | անբավարար | Չեն կազմակերպվում սեմինարներ,հանդիպումներ | | |
| | | | 3. Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների մասնակցություն | 2024-2028 Տնօրենություն,դասղեկ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, ծնողներ | գերազանց | Ծնողների մասնակցությունը ակտիվ է | | |
| | | | | | | բավարար | Ծնողների մասնակցությունը ակտիվ չէ | | |
| | | | | | | անբավարար | Ծնողները չեն մասնակցում | | |
| | | 4.Մանկավարժական համակազմի որակական բարելավում, դասապրոցեսների կառավարման | 1. Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊՉ-ին և փոփոխություններին | 2024-2028 Տնօրեն,օպերատոր, ԿԶՆԱԿ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, մեթոդական նյութեր,էլեկտրոնային ռեսուրսներ,մանկավարժներ | գերազանց | Մանկավարժները ակտիվորեն մասնակցում են վերապատրաստումներին, կամավոր ատեստավորմանը,ուսուցման որակը բարելավվել է | Ուսուցիչների պասիվությունը,անվստահությունը նորարական մեթոդների նկատմամբ | Բարձրացնել մանկավարժական խորհրդի անդամների մոտիվացիան,կիրառել խրախուսման մեխանիզմներ |
| | | | 2. Կազմակերպել | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | արդյունավետության բարձրացում՝ կրթական գործընթացների զարգացում: | դասընթացներ համակարգչային գիտելիքները բարելավելու նպատակով | | | բավարար | Ուսուցիչները մասնակցում են վերապատրաստումների,ուսուցման որակը չի բարելավվել | | |
| | | | 3.Մանկավարժներին դասալսումների հիման վրա մասնագիտական և մեթոդական աջակցության ցուցաբերում | | | անբավարար | Ուսուցիչների մոտիվացիան մնացել է ցածր մակարդակի վրա | | |
| | | 5.Հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդների ձևավորում | Խորհուրդների կազմում ընդգրկել դպրոցի զարգացման համար շահագրգռված անձանց՝ներգրավելով նյութատեխնիկական բազայի և ֆինանսական միջոցների համալրմանը | 2024-2025 Տնօրենություն,կառավարման խորհուրդ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, շրջանավարտներ | գերազանց | Ձևավորված են դպրոցի շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդներ | Շրջանավարտների դպրոցի նկատմամբ հետաքրքրվածության բացասական վերաբերմունք | Ձևավորել ի շահ դպրոցի մտածող և ներդնող շրջանավարտներ ի և հոգաբարձուների խորհուրդներ |
| | | | | | | բավարար | Ձևավորված են կամ շրջանավարտների խորհուրդ կամ հոգաբարձուների խորհուրդ | | |
| | | | | | | անբավարար | Չի ձևավորվել ոչ մեկը | | |
| 4 | Համայնքի հետ սերտ կապերի ընդլայնում և համատեղ աշխատանքների իրականացում, նախագծային և հետազոտական աշխատանքների | 1.Դպրոց-համայնք կապը օգտագործել ի օգուտ երեխաների կրթա-դաստիարակ | 1.Դպրոցին մասնակից դարձնել համայնքի մաքրության, մշակութային, սպորտային,հանրապետական, | 2024-2029 Տնօրենություն,ԴԱԿ,դասղեկներ,համայնքի ներկայացուցիչներ | Սեփական ֆինանսական միջոցներ,համայնքային բյուջե, մարդկային ռեսուրսներ | գերազանց | Դպրոցը ակտիվորեն մասնակցում է համայնքում կազմակերպվող միջոցառումներին, հաճախ են կազմակերպվում հանդիպումներ շահառու | Մոտիվացիայի պակաս | Անել համայնքի կարիքների բազմակողմանի վերլուծություն և համապատասխանեցնել կրթական գործընթացներին, բարձրացնել մոտիվացիան |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | իրականացում ըստ համայնքի կարիքի | չական աշխատանքների բարելավման | մարզային և համայնքային նշանակության միջոցառումներին | | | | կազմակերպությունների հետ | | |
| | | | | | | բավարար | Դպրոցը երբեմն մասնակցում է համայնքում կատարվող միջոցառումներին | | |
| | | | | | | անբավարար | Դպրոցը ցանկություն չունի մասնակցելու համայնքում կատարվող միջոցառումներին | | |
| | | | 2. Կազմակերպել հանդիպումներ համայնքի տարբեր սոցիոլոգիական խմբերի, հասարակական կազմակերպությունների հետ | | | գերազանց | Հանդիպումները հաճախակի են ըստ պլանի | | |
| | | | | | | բավարար | Կատարվում են կիսով չափ | | |
| | | | | | | անբավարար | Հանդիպումներ չեն լինում | | |
| | | | 3. Մասնակցել համայնքի տարածքում իրականացվող ծառատունկին | | | գերազանց | Մասնակցություն-100% | | |
| | | | | | | բավարար | Մասնակցություն-50% | | |
| | | | | | | անբավարար | Չի մասնակցում | | |
| | | | 4. Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ, համատեղ միջոցառումներ | | | գերազանց | Կազմակերպվում են լիարժեք | | |
| | | | | | | բավարար | Կազմակերպվում են մասնակի | | |
| | | | | | | անբավարար | Չեն կազմակերպվում | | |
| | | 2. Սովորողն | 1. Իրականացնել | 2024-2029 Տնօրենությու | Դպրոցի բյուջե,համայն | գերազանց | Համայնքի կարիքները | Համայնքի կարիքների և | Սովորողների մեջ զարգացնել |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | երի անմիջական մասնակցություն և ներգրավվում համայնքի խնդիրներին | համայնքի կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն | ն,դասղեկներ, ԴԱԿ,ծնողական խորհուրդ | ք,ՏԻՄ,սովորողներ,ծնողներ | | ուսումնասիրված և վերլուծված են | կրթական գործընթացի անհամատեղելիություն | մոտիվացիան,ներգրավել համայնքում կատարվող աշխատանքներին /նախագծային աշխատանքներ,էրկսկուրսիա խմբեր և այլն/ |
| | | | | | | բավարար | Համայնքի կարիքները ուսումնասիրված և վերլուծված են 50%-ով | | |
| | | | | | | անբավարար | Համայնքի կարիքները ուսումնասիրված և վերլուծված չեն | | |
| | | | 2. Հաշվի առնել համայնքի կարիքներն ու ներուժը նախագծային աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ | | | գերազանց | սովորողները նախաձեռնող են և կարողունակ | | |
| | | | | | | բավարար | երեխաները ակտիվ են մասամբ | | |
| | | | | | | անբավարար | երեխաները պասիվ են | | |
| | | | 3. Խթանել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների հետ | 2024-2029 Տնօրէնություն,դասղեկներ, ԴԱԿ,ծնողական խորհուրդ | Համայնք,ՏԻՄ, սովորողներ,ծնողներ | գերազանց | Նկատվում է լրացուցիչ ֆինանսական հոսք, ավելացել է դպրոցի նկատմամբ շահագրգիռ կազմակերպությունների հետաքրքրությունը,սովորողները նախաձեռնող են և կարողունակ | նախասիրության պակաս | Տեղեկությունների փոխանակում,հետազոտություն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | բավարար | Նկատվում է դպրոցի և հովանավորների միջև կապ, քիչ է շահագրգիռ կազմակերպությունների հետաքրքրությունը դեպի դպրոց,երեխաները ակտիվ են մասամբ | | |
| | | | | | | անբավարար | Դպրոցի նկատմամբ չկա հովանավորների ուշադրություն, լրացուցիչ ֆինանսական հոսքը բացակայում է,երեխաները պասիվ են | | |
| | | | 4. Երկարօրյա խմբերի ձևավորման աշխատանքներ | 2024-2029 Տնօրենություն,ուսուցիչներ,դասղեկներ,ծնողներ | Դպրոցի բյուջե,համայնք,բարերարներ,սովորողներ | գերազանց | ձևավորվել են արտադասարանական, արտադպրոցական, երկարօրյա խմբեր,սովորողի առաջադիմությունը բարելավվել է | Ծնողների անլուրջ վերաբերմունք երեխաների ուսուցման նկատմամբ | Դպրոցի և համայնքի միջև տեղեկատվության կապի ամրապնդում |
| | | | | | | բավարար | Ձևավորվել է երկարօրյա խումբ,առաջադիմության աճ չկա | | |
| | | | | | | անբավարար | Երկարօրյա խմբեր չեն ձևավորվել | | |
| 5 | Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման | 1. Ուսուցիչների պատրաստվածության և | 1. Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական գիտելիքների, | 2024-2029թթ., Յուրաքանչյուր ուստարի Տնօրեն,ԿԳՄՍ,ԿԶՆԱԿ,Տ | Առանց ֆինանսական միջոցների, ՏՀՏ | գերազանց | Մանկավարժները ակտիվորեն մասնակցում են մասնագիտական և ՏՀՏ –ի յուրացմանը | Ուսուցիչների մասնագիտական կարողությունների, | Մանկավարժական համակազմի վերապատրաստումների իրականացում,հն |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կատարելագործում, ժամանակակից ՏՀՏ-երին մանկավարժների տիրապետման մակարդակի բարելավում | ինքնագնահատականի բարձրացում, մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնում | տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների յուրացմանը և կատարելագործմանը նպաստող միջոցառումներ՝վերապատրաստումներ,սեմինարներ։ | ՄԱԿ, մեթոդ միավորման նախագահ,օպերատոր | գործիքներ,էլեկտրոնային ռեսուրսներ | | նպաստող վերապատրաստումներին,սեմինարներին | նորարարությունների ներդրման շահագրգռվածության պակաս: | քնակրթության խթանում,անձնա կազմի հմտությունների զարգացում |
| | | | | | | բավարար | Մանկավարժների մասնակցությունը ոչ լիարժեք է | | |
| | | | | | | անբավարար | Չեն մասնակցում վերապատրաստումներին,սեմինարներին | | |
| | | | 2. Ապահովել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը և տարակարգ ստանալուն: | | | գերազանց | Ուսուցիչները ակտիվորեն մասնակցում են կամավոր ատեստավորմանը | | |
| | | | | | | բավարար | Ուսուցիչները մասնակցում են կամավոր ատեստավորմանը ոչ լիարժեք | | |
| | | | | | | անբավարար | Ուսուցիչները չեն մասնակցում կամավոր ատեստավորմանը | | |
| | | 2. Ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդներին տիրապետում և կիրառում դասապրոցե | Ուսուցիչների փոխադարձ օգնություն դասապրոցեսում ՏՀՏ գործիքները օգտագործելու համար | 2024-2029 Տնօրեն,օպերատոր | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում, ինտերնետ, ՏՀՏ գործիքներ,էլեկտրոնային ռեսուրսներ | գերազանց | Դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, կա փոխադարձ օգնություն և աջակցություն | Ուսուցիչների մոտիվացիայի պակաս,պասիվություն,անվստահություն նորարարական մեթոդների և ՏՀՏ գործիքների | Ուսուցիչների մասնակցության խթանում ՏՀՏ վերապատրաստումներին,սեմինարներին,վեբինարներին |
| | | | | | | բավարար | Դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը ցածր մակարդակի վրա է, կա փոխադարձ | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սում | | | | | օգնության և աջակցության պակաս | նկատմամբ | |
| | | | | | | անբավարար | Փոխադարձ օգնությունը բացակայում է | | |
| 6 | Ուսումնական գործընթացում,դպրոցի կառավարման գործունեության մեջ ՏՀՏ գործիքների և նորարարությունների կիրառման ապահովում | 1․Դպրոցը համալրել ՏՀՏ գործիքներով | 1․Դպրոցը համալրել համակարգչով,էլեկտրոնային գրատախտակով, թվայնացնել գրադարանային ֆոնդը | 2025-2027 Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական Համակարգող,գրադարանավար,օպերատոր | ֆինանսական միջոցներ,բարերարներ,դրամաշնորհային ծրագրեր, համակարգիչներ, պրոյեկտորներ, էլեկտրոնային գրատախտակ,անխափան ինտերնետ կապ,անխափան էլեկտրական հոսանք | գերազանց | Դպրոցը համալրվելէ համակարգիչով․,էլեկտրոնային գրատախտակով,գրադարանային ֆոնդը թվայնացվել է | Ֆինասական միջոցների պակասություն | Ֆինանսական միջոցների հայթայթում, ՏՀՏ գործիքների ձեռքբերում |
| | | | | | | բավարար | Դպրոցը համալրվելէ համակարգիչով ,գրադարանային ֆոնդը թվայնացվել է | | |
| | | | | | | անբավարար | Դպրոցը չի համալրվել համակարգիչով ,էլեկտրոնային գրատախտակով,գրադարանային ֆոնդը չի թվայնացվել է | | |
| | | | 2․Կիբերանվտանգության ապահովում, հակավիրուսների կիրառում | 2024-2029 Տնօրեն, վարչատնտեսական համակարգող,օպերատոր | Ֆինանսական միջոցներ,հակավիրուսային ծրագրեր | գերազանց | Կիբերանվտանգությունը ապահոված է,կիրառված են հակավիրուսներ | Ֆինանսական միջոցներ | հակավիրուսային ծրագրերի ապահովում |
| | | | | | | բավարար | Կիբերանվտանգությունը ապահոված է մասնակի | | |
| | | | | | | անբավարար | Կիբերանվտանգությունը ապահոված չէ,կիրառված չեն հակավիրուսներ | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2. Իրականացնել քայլեր ուղղված դպրոցի գործավարությանը , մանկավարժական անձնակազմի համակարգչային կարողությունների բարելավմանը և ՏՀՏ գործիքների կիրառմանը դասապրոցեսում | 1. Դպրոցի գործավարությունը՝ հաստիքացուցակը,դասաբաշխումը,կառավարման և խորհրդակցական մարմինների արձանագրությունները,անձնակազմի ու աշակերտների անձնական գործերը իրականացնել էլեկտրոնային տարբերակով | 2024-2029 Տնօրենություն, օպերատոր, մանկավարժներ | Համակարգիչներ, պրոյեկտորներ, էլեկտրոնային գրատախտակ ,անխափան ինտերնետ կապ,անխափան էլեկտրական հոսանք | գերազանց | Դպրոցի գործավարությունը, աշխատակիցների հաշվետվությունները,կատարվում են էլեկտրոնային համակարգով,դասապրոցեսի ընթացքում օգտագործվում են ՏՀՏ գործիքներ | Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառության կարողունակությունների պակաս | ՏՀՏ գործիքների և նորագույն տեխնոլոգիաների ճիշտ կիրառման նպատակով վերապատրաստումների և սեմինարների կազմակերպում |
| | | | | | | բավարար | Դպրոցի գործավարությունը, աշխատակիցների հաշվետվությունները կատարվում են էլեկտրոնային համակարգով մասամբ,դասապրոցեսի ընթացքում քիչ են օգտագործվում են ՏՀՏ գործիքներ | | |
| | | | | | | անբավարար | Դպրոցի գործունեության մեջ չեն օգտագործվում նորագույն տեխնոլոգիաներ և նորարարություններ | | |
| | | | 2. Դասապրոցեսի և միջոցառումների ընթացքում հնարավորինս շատ օգտագործել ՏՀՏ գործիքներ,էլեկտրոնային | 2024-2029 Ուսուցիչ, օպերատոր, դասղեկներ | Համակարգիչներ, պրոյեկտորներ, էլեկտրոնային գրատախտակ ,անխափան ինտերնետ կապ,անխափան | գերազանց | Դասապրոցեսի և միջոցառումների ընթացքում հնարավորինս օգտագործվում են ՏՀՏ գործիքներ,էլեկտրոնային կրթական ռեսուրսներ և նորարարություններ | ՏՀՏ գործիքներին տարիքով ուսուցիչների դժվար յուրացում | Ցուցաբերել հաճախակի օգնություն տարիքով ուսուցիչներին,սահմանել հսկողություն տնօրենի կողմից |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կրթական ռեսուրսներ և նորարարություններ | | էլեկտրական հոսանք | բավարար | Դասապրոցեսի և միջոցառումների ընթացքում օգտագործվում են ՏՀՏ գործիքներ ոչ լիարժեք | | |
| | | | | | | անբավարար | Դասապրոցեսի և միջոցառումների ընթացքում չեն օգտագործվում ՏՀՏ գործիքներ,էլեկտրոնային կրթական ռեսուրսներ և նորարարություններ | | |
| | | | 3. Էլեկտրոնային մատյանները լրացնել պատշաճ կերպով և ժամանակին | | | գերազանց | Էլեկտրոնային մատյանները լրացված են պատշաճ կերպով և ժամանակին | | |
| | | | | | | բավարար | Էլեկտրոնային մատյանները լրացվում են ուշացումներով | | |
| | | | | | | անբավարար | Էլեկտրոնային մատյանները չեն լրացվում | | |
| | | | 4. Բարելավվել դպրոցի կայքէջը,օգտագործել նաև ֆեյսբուքյան էջը | 2024-2029 Տնօրեն,օպերատոր,դասղեկներ | Ֆինանս չի պահանջվում, անխափան ինտերնետ կապ,անխափան էլեկտրական հոսանք | գերազանց | Դպրոցի կայքէջը բարվոք վիճակում է, օգտագործվում է ֆեյսբուքյան էջը | | |
| | | | | | | բավարար | Կայքէջը նորմալ վիճակում է,ֆեյսբուքյան էջը չի օգտագործվում | | |
| | | | | | | անբավարար | Դպրոցի կայքէջը բարվոք վիճակում չէ, չի օգտագործվում ֆեյսբուքյան էջը | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 5. Հաստատված ուսումնադաստիարակչական աշխատանքների ,մեթոդմիավորումների ,դասղեկների աշխատանքային պլանները տեղադրել պաշարների շտեմարանում | | | գերազանց | Ուսումնադաստիարակչական աշխատանքների,մեթոդմիավորումների ,դասղեկների աշխատանքային պլանները տեղադրվում են պաշարների շտեմարանում ժամանակին, առանց ուշացման | Մոտիվացիայի պակաս | Տնօրենի կողմից ահմանել ,խիստ վերահսկողություն |
| | | | | | | բավարար | Ուսումնադաստիարակչական աշխատանքների,մեթոդմիավորումների ,դասղեկների աշխատանքային պլանները տեղադրվում են պաշարների շտեմարանում ուշացած կամ մասամբ | | |
| | | | | | | անբավարար | Ուսումնադաստիարակչական աշխատանքների,մեթոդմիավորումների ,դասղեկների աշխատանքային պլանները չեն տեղադրվում պաշարների շտեմարանում | | |
| | | | 6. Ֆինանսական հաշվետվությունները,ուսուցչի | 2024-2029 Օպերատոր, դասղեկներ | Ֆինանս չի պահանջվում, անխափան ինտերնետ | գերազանց | Ֆինանսական հաշվետվությունները,ուսուցչի թափուր տեղի մրցույթի | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | թափուր տեղի մրցույթի հայտարարությունները և այլն տեղադրել դպրոցի կայքէջում | | կապ,անխափան էլեկտրական հոսանք | | հայտարարություններ և այլն տեղադրվում են դպրոցի կայքէջում | | |
| | | | | | | բավարար | Ֆինանսական հաշվետվություններ ը,ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարություններ և այլն տեղադրվում են դպրոցի կայքէջում ոչ լրիվ | | |
| | | | | | | անբավարար | Ֆինանսական հաշվետվություններ ը,ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարություններ չեն տեղադրվում դպրոցի կայքէջում | | |
| 7 | Ուսուցման որակի բարձրացում նոր հանրակրթական պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան | 1. Աշխատանքային կարգապահության բարձրացում | Հետևողական լինել աշխատողների և սովորողների աշխատանքային ռեժիմին | 2024-2029թթ Տնօրեն,դաստեկ | Ֆինանսական միջոցներ | գերազանց | Կարգապահությունը բարձր մակարդակի վրա է, ուշացումներ չկան | Տրանսպորտի ոչ նորմալ աշխատանք, ցածր աշխատավարձ | Աշխատավարձի բարձրացում,ճանապարհածախսի հատուցում |
| | | | | | | բավարար | Կարգապահությունը միջին մակարդակի վրա է, լինում են ուշացումներ | | |
| | | | | | | անբավարար | Կարգապահությունը ցածր է | | |
| | | 2. ՀՊՉ-ով նախատեսված գիտելիքների և | 1. Վերահսկել ՀՊՉ-ով համապատասխան գիտելիքների և | 2024-2029 Տնօրեն, մեթոդ միավորման նախագահ | Մեթոդական նյութեր,ՏՀՏ գործիքներ,դասագրքեր,էլեկտրոնային ռեսուրսներ | գերազանց | Իրականացվում է նոր ՀՊՉ –ին համապատասխան ուսուցում, կա ուսուցման որակի բարելավում | Ուսուցիչների մոտ նախաձեռնության պակաս,նոր չափորոշիչնե | ՀՊՉ-ով նախատեսված գրծողությունների հետևողական իրականացում, նոր ուսուցման |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կարողություններ ապահովում | հմտությունների փոխանցմանը երեխաներին | | | բավարար | Իրականացվում է նոր ՀՊՉ –ին համապատասխան ուսուցում, ուսուցման որակի բարելավում չկա | րին ոչ բավարար տիրապետում | մեթոդների ներդրում |
| | | | | | | անբավարար | Չի իրականացվում է նոր ՀՊՉ –ին համապատասխան ուսուցում | | |
| | | | 2. Կազմակերպել առարկայական մրցույթներ, վիկտորինաներ ներդպրոցական օլիմպիադաներ, խաղեր | 2024-2029 Տնօրեն, դասղեկներ, ուսուցիչներ, մեթոդ միավորման նախագահ, ԴԱԿ | Դպրոցի բյուջե,ծնողական ներդրումներ | գերազանց | ՀՊՉ-ով նախատեսված վերջնարդյունքների ապահովում,մասնակցություն առարկայական մրցույթներին,ներդպրոցական օլիմպիադաներին,խաղերին նայլն | Աշակերտներ ի՝միջոցառումներին ներգրավվածության պակաս | Ավելի հետաքրքիր ու յուրահատուկ միջոցառումների կազմակերպում |
| | | | | | | բավարար | Սովորողների մոտ նկատվում է ուսման նկատմամբ հետաքրքրություն, որոշ սովորողների կողմից միջոցառումներին, խմբականներին մասնակցության պասիվություն,մոտիվացիայի պակաս | | |
| | | | | | | անբավարար | Սովորողները ցանկություն չունեն մասնակցելու կրթական գործընթացին | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 3. Արտակարգ ընդունակություններ և ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար իրականացնել երկարօրյա ուսուցում | 2024-2029թթ Տնօրեն, մանկավարժներ,ծնողներ, ՏՄԱԿ | Պետական բյուջե, կամավորական սկզբունք | գերազանց | Իրականացվել է անհատական ուսուցման պլանով ուսուցում արտակարգ ընդունակություններ և ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար | Մոտիվացիայի պակաս,սովորողների կողմից ավելորդ ծանրաբեռնվածություն | Արտադասարանական խմբակների ստեղծում ոչ հին ավանդական սկզբունքներով |
| | | | | | | բավարար | Իրականացվել է արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների դիտարկման նախապատրաստական աշխատանքներ | | |
| | | | | | | անբավարար | Որևէ գործողություն չի իրականացվել | | |
| | | | 4. Օգտագործել խրախուսական միջոցներ՝ շնորհակալագրեր, դրամական պարգևներ, գովասանագրեր | Տնօրեն, դասղեկներ | Դպրոցի բյուջե | գերազանց | Տրվում են շնորհալագրեր,գովասանագրեր,դրամական պարգևներ | Խրախուսման ընթացքում կարող է լինել կողմնակալություն | Բացառել խտրականության դեպքերը |
| | | | | | | բավարար | Տրվում են շնորհալագրեր,գովասանագրեր,դրամական պարգևներ չկան | | |
| | | | | | | անբավարար | Չեն տրվում շնորհալագրեր,գովասանագրեր,դրամական պարգևներ | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3․Ներքին գնահատման իրացում | Ներքին գնահատման վերլուծություն | Յուրաքանչյուր ուս.տարվա սկիզբ<br><br>Տնօրեն, դասղեկներ, ԴԱԿ, ուսուցիչներ | Ֆինանս չի պահանջվում, մարդկային ռեսուրսներ | գերազանց | Իրականացվել է ներքին գնահատում ըստ պլանի,հաշվետվությունը տեղադրվել է պաշարների շտեմարանում | Նախաձեռնության պակաս,մասնակցության պասիվություն | Հետևողական աշխատանք յուրաքանչյուրի հետ |
| | | | | | | բավարար | Իրականացվել է ներքին գնահատում ըստ պլանի, հաշվետվությունը չի տեղադրվել պաշարների շտեմարանում | | |
| | | | | | | անբավարար | Չի իրականացվել ներքին գնահատում | | |
| 8 | Արտադպրոցական միտցառումների կազմակերպում՝ էքսկուրսիաներ,այցելություններ մշակույթի կենտրոններ,հուշարձաններ | Սովորողին շահագրգռել սիրել բնությունը, ազգային մշակույթը | Այցելություններ կազմակերպել մշակույթի կենտրոններ,թանգարաններ,հուշարձաններ | 2024-2029թթ Տնօրեն, դասղեկներ, ԴԱԿ, ուսուցիչներ | Դպրոցի բյուջե,ծնողների և բարերարների ներդրում, | գերազանց | Սովորողները ակտիվորեն մասնակցում են բոլոր արտադպրոցական միջոցառումներին | Ֆինանսի խնդիր․ծնողների և երեխաների շահագրգռվածության պակաս | Դպրոցի բյուջեն ճիշտ պլանավորել,օգտագործել դպրոցի տնտեսված ֆինանսական միջոցները, գտնել հովանավորներ |
| | | | | | | բավարար | Սովորողների մասնակցությունը արտադպրոցական միջոցառումներին ոչ լիարժեք է բայց կա հետաքրքրության աճ | | |
| | | | | | | անբավարար | Սովորողները ցանկություն չունեն մասնակցելու արտադպրոցական միջոցառումներին | | |
| 9 | Ապահովել կրթված և դաստիարակված, սեփական և | 1․Ներառական, բազմակարծ | 1․Մանկավարժական համակազմի և | 2024-2029թթ, Տնօրենություն,ԴԱԿ,դասղեկներ, | Ֆինանս չի պահանջվում | գերազանց | Մանկավարժների և ծնողների միջև կա լիարժեք համագործակցությու | Դպրոց-աշակերտ-ծնող կապի թուլացում, | Մանկավարժների և ծնողների համագործակցությունը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | համամարդկային մշակույթի արժեքները կրող, բռնությունից պաշտպանված,բազմակարծիք և մասնակցային որակներով օժտված աշակերտական համակազմ | իք և մասնակցային միջավայրի ստեղծում, բուլինգի դեպքերի կանխարգելում | ծնողների համագործակցություն բռնության, հալածանքի դեպքերը բացահայտելու և կանխարգելելու նպատակով: | ծնողներ | | | ն բուլինգի դեպքերը կանխարգելու համար | դրսի միջավայրի ազդեցություն | ակտիվացնել,դպրոց-ծնող կապը ուժեղացնել՝ կազմակերպելով հաճախակի հանդիպումներ,միջոցառումներ |
| | | | | | | բավարար | Մանկավարժների և ծնողների միջև կա թույլ համագործակցություն բուլինգի դեպքերը կանխարգելու համար | | |
| | | | | | | անբավարար | Մանկավարժների և ծնողների միջև չկա համագործակցություն բուլինգի դեպքերը կանխարգելու համար | | |
| | | | 2․Դպրոցի աշխատակազմի, ներառական կրթության ոլորտում , գիտելիքների ու հմտությունների արդիականացում | 2024-2029թթ Տնօրեն,ԿԶՆԱԿ,ՏՄԱԿ,հոգեբան,ուսուցչի օգնական | Դպրոցի բյուջե,մեթոդական և ուսումնաօժանդակ նյութեր | գերազանց | Դպրոցի աշխատակազմը ակտիվորեն է մասնակցում կազմակերպվող ներառական դասընթացներին,սեմինարներին և ստանում է կայուն գիտելիքներ ու հմտություններ | Անձնակազմի մոտիվացիայի պակաս,անվստահություն դասավանդողների նկատմամբ | Կատարել բացատրական աշխատանք անվստահության մթնոլորտը վերացնելու նպատակով |
| | | | | | | բավարար | Դպրոցի աշխատակազմը ոչ լրիվ կազմով է մասնակցում կազմակերպվող ներառական դասընթացներին,սեմինարներին ,արդյունքը քիչ արդյունավետ է | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | անբավարար | Դպրոցի աշխատակազմի մասնակցության պասիվություն կա, արդյունք չկա | | |
| | | | 3. Զրույցների, քննարկումների, կազմակերպում աշակերտ-ծնող-հոգեբան հարաբերությունների փոխգործունեության համար, | 2024-2029թթ Տնօրեն,հոգեբան,ԴԱԿ,դասղեկ,ծնող | Ֆինանս չի պահանջվում, մեթոդական նյութեր | գերազանց | Տեղի են ունենում հաճախակի հանդիպումներ,քննարկումներ | Մասնակցող կողմերի անպատասխանատու վերաբերմունք | Տնօրենի կողմից իրականացնել վերահսկողություն և բացատրական աշխատանք |
| | | | | | | բավարար | Հանդիպումները հաճախակի չեն ,կամ կրում են ձևական բնույթ | | |
| | | | | | | անբավարար | Հանդիպումներ չեն լինում | | |
| | | | 4. Զարգացնել ներառական կրթությունը՝ երեխաների և ծնողների համար պարբերաբար սեմինարների կազմակերպման միջոցով | 2024-2029թթ Տնօրեն,ՏՄԱԿ,հոգեբան, դասղեկ | Ֆինանս չի պահանջվում, մեթոդական նյութեր | գերազանց | Կազմակերպվում են հաճախակի սեմինարներ երեխաների,ծնողների հետ,տարվում են բացատրական աշխատանքներ ներառական կրթությունը մատչելի դարձնելու համար | Նախաձեռնության պակաս | Հետևողական աշխատանք մասնակիցների հետ |
| | | | | | | բավարար | Քիչ են կազմակերպվում սեմինարներ երեխաների,ծնողների հետ | | |
| | | | | | | անբավարար | Սեմինարներ չեն կազմակերպվում | | |
| | | | 5. Ուսումնական | 2024-2029թթ | Ֆինանս չի | գերազանց | Ուսուցչի օգնականը | Մոտիվացիայ | Կազմակերպել |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | առարկաներից հետ մնացող աշակերտներին աջակցելու, դասերին լիարժեք մասնակցելու նպատակով ներգրավվել ուսուցչի օգնականին, հոգեբանին | Տնօրեն,ուսուցչի օգնական, հոգեբան, դասղեկ | պահանջվում, ուսումնական նյութեր,առարկայական ծրագրեր | | և հոգեբանը ներգրավված են ներառական կրթության արդյունավետ կազմակերպման մեջ | ի պակաս | երկարօրյա ուսուցում |
| | | | | | | բավարար | Ուսուցչի օգնականը և հոգեբանը ներգրավված են ներառական կրթության ոչ արդյունավետ կազմակերպման մեջ | | |
| | | | | | | անբավարար | Ուսուցչի օգնականը և հոգեբանը ներգրավված չեն ներառական կրթության կազմակերպման մեջ | | |
| | | 2. Զարգացնել յուրաքանչյուր սովորողի մտքի ազատության ու ստեղծագործական մտածողությունը,հնարավորություն տալ ինքնուրույն մտածելու, որոշումներ | 1. Սովորողներին հնարավորություն տալ գտնվելու բազմակարծիք միջավայրում, ապահովելով նրանց մտքի ազատության,ինքնուրույն մտածելու,նախաձեռնելու, ստեղծագործելու | 2024-2029թթ Տնօրեն, մ/մ նախագահներ | Ֆինանս չի պահանջվում | գերազանց | Սովորողներին հնարավորություն է տրված գտնվելու բազմակարծիք միջավայրում, ապահոված է նրանց մտքի ազատության,ինքնուրույն մտածելու,նախաձեռնելու, ստեղծագործելու ունակությունները | Խմբային աշխատանքի ,նորարարությունների հետ կապված փորձի պակաս | Տնօրենի,մեթոդմիավորումների աջակցություն |
| | | | | | | բավարար | Սովորողներին հնարավորություն է տրված գտնվելու | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդունելու | | | | | բազմակարծիք միջավայրում, ապահովված չէ նրանց մտքի ազատության,ինքնու րույն մտածելու,նախաձեռ նելու, ստեղծագործելու | | |
| | | | | | | անբավարա ր | հնարավորություն չի տրված գտնվելու բազմակարծիք միջավայրում, ապահովված չէ նրանց մտքի ազատության,ինքնու րույն մտածելու,նախաձեռ նելու, ստեղծագործելու ունակությունները | | |
| | | | Սովորողի մոտ ձևավորել գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային բաղադրիչները,ո րի արդյունքում դպրոցն ավարտելուց հետո,չափահաս կյանքում սովորողը լիովին կդրսևորվի որպես հասարակության լիիրավ անդամ | 2024-2029թթ Տնօրեն,հոգե բան,ուսուցչի օգնական | Ֆինանս չի պահանջվում | գերազանց | Սովորողի մոտ ձևավորված են բոլոր բաղադրիչները | Մանկավարժ ների ծանրաբեռնվ ածություն, սովորողների նախաձեռնու թյան պակաս | Ուսումնական ծանրաբեռնվածու թյան կարգավորում |
| | | | | | | բավարար | Սովորողի մոտ ձևավորված են բաղադրիչների որոշ մասը | | |
| | | | | | | անբավարա ր | Բաղադրիչներից ոչ մեկը չի ձևավորվել սովորողի մոտ | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Աշխատակազմի արժևորման,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների ստեղծում | 1. Ուսուցիչների ստեղծագործական նորարական գործունեությունը խթանող խրախուսման միջոցների ստեղծում | Անձնակազմի արժեհամակարգի ձևավորում | 2024-2029թթ Տնօրեն, ԴԱԿ, մեթոդ միավորման նախագահ, կառավարման խորհուրդ, հաշվապահ | Ֆինանս չի պահանջվում, մեթոդական նյութեր | գերազանց | Ձևավորվել է անձնակազմի կայուն արժեհամակարգ | Գնահատման մեխանիզմների չիմացություն | Մշակել գնահատման մեխանիզմներ |
| | | | | | | բավարար | Ձևավորվել է անձնակազմի թերի արժեհամակարգ | | |
| | | | | | | անբավարար | Արժեհամակարգ չի ձևավորվել | | |
| | | | Խրախուսման և պարգևատրման մեխանիզմների ստեղծում | Յուրաքանչյուր կիսամյակ ԿԳՄՍ,,լիազոր մարմին,տնօրեն, , հաշվապահ | Դպրոցի բյուջե,բարերարներ,մեթոդական ռեսուրսներ | գերազանց | Ստեղծված են պարգևատրման մեխանիզմներ՝շնորհակալագիր,դրամական պարգև,հավելավճար | Ֆինանսի պակաս,խտրականության դրսևորում | Խարախուսման և պարգևատրման մեխանիզմները կիրառել ըստ աշխատանքի որակի |
| | | | | | | բավարար | Օգտագործվել է պարգևատրման մեխանիզմներից որևէ մեկը | | |
| | | | | | | անբավարար | Չի գտագործվել պարգևատրման մեխանիզմներից ոչ մեկը | | |
| | | 2. Մոտիվացիա. ինքնակատարելագործում,ինքնակրթություն | Խթանել ինքնակրթության զարգացմանը՝ստեղծելով բարենպաստ միջավայր | 2024-2029թթ Տնօրեն, մանկավարժական համակազմ | Դպրոցի բյուջե,մեթոդական և էլեկտրոնային ռեսուրսներ | գերազանց | Ստեղծված է ինքնակրթության զարգացման բարենպաստ միջավայր,անձնակազմը ինքնակրթությամբ է զբաղվում | Ֆինանսական միջոցների պակաս,մոտիվացիայի պակաս | Ապահովել անհրաժեշտ ուսումնական նյութերով և էլեկտրոնային ռեսուրսներով |
| | | | | | | բավարար | Ստեղծված է ինքնակրթության զարգացման բարենպաստ միջավայր,սակայն անձնակազմի մի մասը ինքնակրթությամբ չի | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | զբաղվում | | |
| | | | | | | անբավարար | Ինքնակրթության զարգացման բարենպաստ միջավայր ստեղծված չէ | | |
| 11 | Բյուջետային ծախսերի ճիշտ պլանավորում,լրացուցիչ ֆինանսական միջոցների ձևավորում | 1. Մասնագիտական գիտելիքների ,կարողությունների բարելավում | Մասնակցել հաշվապահական դասընթացների, սեմինարների,խորհրդակցությունների | 2024-2029թթ Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, բարերարներ | Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, բարերարներ | գերազանց | Ակտիվորեն մասնակցություն է ցուցաբերվում հաշվապահական դասընթացների,սեմինարների,խորհրդակցությունների | Անպատասխանատու վերաբերմունք հաշվապահական գիտելիքների կատարելագործման նկատմամբ | Հետևողական աշխատանք մասնակիցների մոտիվացիան բարձրացնելու համար |
| | | | | | | բավարար | Հաշվապահական դասընթացների,սեմինարների,խորհրդակցությունների մասնակցությունը ակտիվ չէ | | |
| | | | | | | անբավարար | Հաշվապահական դասընթացներին,սեմինարներին,խորհրդակցություններին մասնակցություն չկա | | |
| | | 2. Համագործակցել համայնքի հետ, գտնել հովանավորներ | Կազմակերպել հանդիպումներ համայնքի ղեկավար կազմի ,գործունյա անհատների հետ | 2024-2029թթ Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | Ֆինանս չի պահանջվում | գերազանց | Կազմակերպվում են հանդիպումներ համայնքի ղեկավար կազմի,գործունյա անհատների հետ,արդյունքը արդյունավետ է | Դպրոցի նկատմամբ անտարբերություն | Տանել աշխատանքներ անտարբերությունը չեզոքացնելու ուղղությամբ՝ միջոցառումներ,մեծարման երեկոներ և այլն |
| | | | | | | բավարար | Կազմակերպվում են հանդիպումներ համայնքի ղեկավար կազմի,գործունյա անհատների | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | հետ,արդյունքը արդյունավետ չէ | | |
| | | | | | | անբավարար | Չեն կազմակերպվում են հանդիպումներ համայնքի ղեկավար կազմի,գործունյա անհատների հետ,արդյունք չկա | | |
| | | 3․Դպրոցի բյուջեի արդյունավետը և նպատակային օգտագործում | Բյուջեի կատարողականի գրագետ աշխատանք | 2024-2029թթ Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, բարերարներ | Ֆինանս չի պահանջվում | գերազանց | Բյուջեի պլանավորումը գրագետ է,բյուջեի միջոցները լիովին բավարարում են նախահաշվով ներկայացված ծախսերին,կուտակվում են միջոցներ այլ ծախսերի համար | Ֆինանսավորման նվազում՝ կախված աշակերտների և դասարանների քանակի նվազումից | Եկամուտներին համապատասխան ծախսերի ճիշտ պլանավորում,ֆինանսական միջոցների նախահաշվի իրատեսական կազմում |
| | | | | | | բավարար | Բյուջեի միջոցները հազիվ բավարարում են նախահաշվով ներկայացված ծախսերին | | |
| | | | | | | անբավարար | Բյուջեն ճիշտ չի պլանավորված,առաջանում ճեղքվածքներ | | |
| | | 4․Մասնակցել լրացուցիչ ֆինանսական ներդրումների ,ծրագրերի | Մասնակցել պետբյուջեից ֆինանսավորվող լրացուցիչ ծրագրերի | 2024-2029թթ Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող | Ֆինանս չի պահանջվում | գերազանց | Դպրոցը ակտիվորեն մասնակցում է պետբյուջեից ֆինանսավորվող լրացուցիչ ծրագրերին | Լրացուցիչ ծրագրեր կազմելու մոտիվացիայի պակաս | Հետևողական աշխատանք լրացուցիչ ֆինանսների հայթայթման գործում |
| | | | | | | բավարար | Դպրոցը հազվադեպ է մասնակցում պետբյուջեից ֆինանսավորվող | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | լրացուցիչ ծրագրերին | | |
| | | | | | | անբավարար | Դպրոցը չի մասնակցում պետբյուջեից ֆինանսավորվող լրացուցիչ ծրագրերին | | |

## Ակնկալվող արդյունքները.

1. Ունենալ ապահով, հարմարավետ, դպրոց, որը կնպաստի յուրաքանչյուր սովորողի կրթության իրավունքի իրացմանը
2. Կառավարման խորհրդի և տնօրենի ակտիվ համագործակցություն
3. Դպրոցի հոգսերով մտահոգված և աջակցող ծնողական համայնքի ձևավորում
4. Մանկավարժների դասավանդման և մասնագիտական որակների բարելավում
5. Աշակերտների ուսման նկատմամբ հետաքրքրությունների բարձրացում , ուսուցման որակի բարելավում և նոր գաղափարների ձևավորման խթանում
6. Համայնքին և նաև բոլոր շահագրգիռ կողմերին մասնակից դարձնել դպրոցի զարգացման գործընթացին և նպաստել դպրոցի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը
7. Սովորողների՝ իրենց նախասիրություններին համապատասխան կարողությունների զարգացում
8. Երկարօրյա խմբերի ստեղծում,սովորողների առաջադիմության բարելավում
9. Արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների գիտելիքների խորացում,ցածր առաջադիմություն ունեցող երեխաների բավարար գնահատականի ապահովում
10. Անհրաժեշտ որակավորում ստացած, իրենց աշխատանքին նվիրված բարձրորակ մանկավարժ -մասնագետներ,ստեղծագործ ուսուցիչներ ,ՏՀՏ կիրառության ընդլայնում
11. Դպրոցի գործավարության, դասապրոցեսի ընթացքում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարությունների օգտագործում: Դասամատյանների, արձանագրությունների, հաշվետվությունների էլեկտրոնային վարում,
12. ՏՀՏ գործիքով աշխատելու անձնակազմի մոտիվացում
13. Սովորողի կողմից հետաքրքրասիրության աճ հայրենի բնության և ազգային մշակույթի նկատմամբ:
14. Դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում
15. Երեխաների համար ստեղծել անվտանգ և հարմարավետ միջավայր
16. Սովորողի գիտելիքների և հմտությունների մակարդակի, դիրքորոշումների ու արժեհամակարգի ձևավորում, որի արդյունքում սովորողը դպրոցն ավարտելուց հետո, չափահաս կյանքում իրեն լիովին կդրսևորի և կինքնաիրացվի որպես հասարակության

լիիրավ անդամ
17. Անձնակազմի արժեհամակարգի ձևավորում, պարգևատրման և խրախուսման մեխանիզմների իրականացում
18. Դպրոցի ֆինանսական միջոցների բարելավում

Կառավարման խորհրդի կողմից պարբերաբար իրականացվում են վերահսկողական աշխատանքներ, որոնք միտված են վերհանելու կատարված աշխատանքներում բացթողումները և դրանց արագ լուծմանը: Որպես վերահսկողական գործիք կիրառվում է տնօրենի կողմից զարգացման ծրագրի կատարողականի, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի,ֆինանսական եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացումը:

## Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշներն ու պահանջները

| հ/հ | Նպատակներին ուղղված գործողությունների արդյունքները և դրանց հիմքերը | Չկատարված կամ թերի կատարված գործողությունները | Դրանց պատճառները | Փոփոխությունների և լրացումների առաջարկություններ | Հաղորդակցության և համայնքի հետ հարաբերությունների կազմակերպման մեխանիզմները |
|---|---|---|---|---|---|
| 1 | Դասասենյակները նորոգվել են | Միջանցքը չի վերանորոգվել | Միջանցքը չի նորոգվել ֆինանսական միջոցների պակասի պատճառով | Առաջարկում եմ նորոգումը տեղափոխել 2027թվական | Համայնքին ներգրավել ,դիմել բարերարների |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| | | | | | |